

ԱՐԵՎՈՅ

ԱՄՍԱԳԻՐ


ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ,
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ



ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1877


ՅՈՒՆԻՄ



ՄԶԿԻԹ ՕՄԱՐԱՅ (ՀԻՆ Տ. ԱՊՈ.ՈՄՊՆԻ)

ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԵԱՆՑ



Ա Խ Ո Շ

Բ. ՏԻԱ. ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԺ
թիւ 6.

ԱՄՍԱԳԻՐ

ՅՈՒՆԻ 30
1877.

ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՈՒՍՄԱՆ

Ա. Պ. Թ Թ Ց (*)

Բ.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՆՀԱՏՈԿԱՆ ԿԵՆԱՅ ՔՆՍՈՒԹԵՆԵՆ

Մատ բարի՝ պառզ բարի առնել :

Ա Յ Ս Պ Ե Ս ահա մարդոց բարւոք
կենցաղավարութեան և հրմական եր-
ջանկութեան համար, Ս. Գրոց ուս-
ման անհրաժեշտ կարեւորութիւնը
նոյն իսկ Աստուծոյ և նորա ամենաշ-
ուռը կամաց հաւատարիմ թարգման
Ս. Մարգարեից և Առաքելց միջոցու-

ինանալ եւ ուսանելէն յետոյ, դար-
ձեալ կըզդամք և կը տեսնենք նորա
կարեւորութեան հարկը նաեւ մարդո-
կային անհատական կենաց քննութե-
նէն և նոյս գործառնութեանց յա-
ռաջ բերած տարբեր եւ հակառակ
արդեանց բազդատութենին:

Օրինակի համար, մեր ծնած եւ
մնած աշխարհին մէջ, մեր շուրջը և

(*) Եարունակութիւն և վերջ, առ թիւ 3.

մեր աչքին առաջ ամեն օր կատարուած թէ բարի և թէ չար, թէ օգտակար և թէ վնասակար իրողութեանց վրայ և թէ մի ուշադիր ակնարկ դարձունենք և նոցա սկզբնապատճառներն ու աղբիւրները որոնենք, անմիջապէս կը ներկայանայ մէջ մարդն իւր լաւ և յուրի կողմերովը . այսինքն՝ իւր բարի և չար կիրքերովն, իւր առաքինութիւններովն և իւր մօլութիւններովը, յորսց առաջինէն միշտ բարիք, երջանկութիւննեւ ուրախութիւն կ'արտադրի . իսկ երկրորդէն՝ միշտ չարիք, թշուառութիւնն և վիշտ . միով բանիւ, մին՝ աշխարհ կը վերաշնէ և մարդկութիւնը կ'երջանկացունէ . իսկ միւսն՝ ամենայն ինչ կ'աւերէ և կ'ապականէ և մարդկութիւնը թշուառութեան կը մատնէ . Այլ սակայն ինչու սյսպէտ, մի և նոյն կիրքերով զարդարուած, մի և նոյն նպատակաւ, մի և նոյն կոչման համար և մի և նոյն յԱստուծոյ ստեղծուած մարդկանց, ինչ պատճառաւ մին այնքան չար և վնասակար և միւսն այնքան բարի և օգտակար կը լինի . ահա այս հարցն երբ լուծենք՝ արդէն մեր նպատակին ևս հասած կը լինիք, ուստի հետեւիք այն հարցի լուծման .

Ծննդոց Ս. Գլքի մէջ, երբ մարդոց ստեղծագործութեան պատճութիւնը կը կարդանէք, կը տեսնենք, որ Աստուած իւր յատուկ ձեռակերտը, մարդկային աղդի առաջին ամոլը՝ ինչպէս յատուկ խնամով իւր ձեռամք կը կազմակերպէ մի և նոյն խնամով և կը զարդարէ զնոսա՝ սրտի եւ հոգւոյ այն ամեն զգացումներով, որը անհըրաժեշտ հարկ են ազատ և ինքնավար մարդումը իւրհական իմաստութեամք ինքինքը կառավարելու և եթէ կամի երջանիկ լինելու համար : Աստուած իւր այս սուշածնը կատարելէ զինի, երկրորդական պաշտօնը դարձեալ իւր

ինամատարութեան ներքիւ կը յանձնէ ներկայական, հրաման բնելով մարդոյն, որ ծննդական օրինօք ամի եւ բազմանայ երկրի վրայ : Աստուածային այն հրամանը անվիճէով կը կատարուի, բնութիւնը իւր պաշտօնը հաւատարմութիւնը իւր կ'ամբ ՚իգործ կը գնէ, որովքիւ ժամանակէն զինի այն երկու մարդէն բազմաթիւ աղդեր յառաջ գալով, կը ծածկէն երկրի ընդարձակութիւնը : Նախամարդոյն այս ապագայ սերունդը կը ժառանգէ լիովին իւր հաւատուն ինչպէս մարմնոյ կատարելութիւնները նցնալէս և հոգւոյ այն ամեն կիրքերը որոցմալ զարդարեց զիա Աստուած . այս տեսութեամբ, հարկ էր որ մարդիկ ինչպէս մարմնոյ կազմութեամբ միօրինակ են, խելաց, զգացմանց եւ գործառնութեանց մէջ և սունոյն միօրինակութիւնը ունենային, այլ սակայն մարդկային աղդի վիճակը առոր բոլորովին հակառակը կը հաստատէ ամեն պարագայի մէջ . քանզի կը տեսնենք ամեն օր, որ իւրաքանչիւր անհատ, թէ բարուք, թէ բնաւորութեամբ և թէ գործալ, այնքան կը տարբերին իւրամէ, որոց մէջ ամենեւին կարելի չը բազդառութիւն գնել,

Կը տեսնեա մարդ մը, որ աշխարհի ամեն բարիքները, զուարձութիւնները փառքերը և բազմադիմի հաճոյական վաղանցուկ զբօսանքները առ ոտն կոխած և անոնց զիւթիչ հրապուրանաց բոլորովին անտարեր, անձնուրաց նահատակութեամբ իւր բոլոր կեանքը նուիրած է մի մարդասիրական ձեռնորկութեան, որուն համար միայն կարծես կըզգայ և կ'ապրի աշխարհի վրայ, օրինակի համար մի ճշմարիտ բրիստոնեայ և հաստատուն հաւատարի տէր մարդ, աղքատասիրութեան զգացմամբ գրաւուած, այսպիսի անձնուիրութեամբ կ'աշխատի և այնպիսի գոր-

Տեր կ'ընէ , որք արդարեւ ինչպէս հաւ ձոյական են Աստուծոյ , նշյնպէս եւ արժանի մարդոց յարդանոց , քանզի նորա միակ հաճոյքը եւ բոլոր զգացումները միմիայն մէկ կէտի վրայ ամ փոխուած կը տեսնուին . այլոց բարիք ընելէն , վշտացելոյ սիրաը սփոփելէն , կարտաելոյ մը պէտքը հոգալէն , որքի մը կոմ այրեց մը արտասուքը սրբելէն մի այնպիսի զօրաւոր հաճոյք կըզգայ . որովհարծես գերբնական զօրութեամբ կ'ոգեւորի , իբրեւ մի պահապան հըրեշտակ ամեն տեղ և ամեն ժամանակ ներկայ և պատրաստ կը տեսնես զիա իւր եղարց ծառայելու , նորա սիրաը շարունակ կը հալի , հոգին կը մաշի և աղիքները կը գալարին այլոց տառաւապանոց և վշտաց վրայ , զորս դարմանելու համար իւր ամեն ունեցածը զոհելէն զինի , անձանձրոյթ կը գեգերի , մէծտառն և կարող անձանց յարկերը , որոց խոզի և զգացմանց գոները բաղ խելով , օգնութիւն կը մուրայ իւր նրւիրական պաշտօնը յառաջ վարելու , քանզի իւր սիրաը քներեր իրեն հանգիստ մնալ , կարծես միշտ արձագանք կը տայ նորա լսելուց Յիսուսի այն խօսքը թէ , « Որովհետեւ արարիք միում ՚ի փարրկանց յայոցանէ ինձ արարիք » : Այսպէս ահա առաքինի և բարեսիրտ մարդն այսպէս արդիւնաւոր կեանք մը կը վարէ աշխարհի վրայ հասարակաց հայր եւ մարդկութեան բարերար լինելով , իսկ ընդհակառակին կը տեսնես անդին մի ուրիշն որ խսպառ զուրի այս տեսակ վսեմ զգացումներէ , բոլորովին անտարբեր այլոց ապրելու եղանակին վրայ , իրեն կէտ նսպատակի ընտրած է միմիայն իւր անձի հոգը , զոր գոհացնելու համար իւր ամբողջ կեանքը կը վատնէ , ունայն և լինասաւ կար հաճոյից ետեւէ վաղելով միշտ . այնքան անձնատուր եղած է իւր պաշ

տելի մոլութեանց , որ բոլորովին տնբան և անզգայ դարձած է . քանզի ը կրնար մտածել , կամ գոնէ իւր անձի փորձավլը ը կրնար զգալ , թէ վայրաքարշ կիրքերն յագենալ ը գիտեն , ընդհակառակին որբան յագուրդ եւ Ճարտակ գտնեն , այնքան աւելի կը զօրանան և կը բորբոքին , ահա այս ամենուն բոլորին անտեղեակ , այնպիսի կատաղութեամբ կը հետեւի իւր կը ըրից առաջնորդութեան , յորմէ ոչ ոք չէ կարող զայն արդելուլ . ոչ Աստուածային երկիւղ , ոչ մարդկային պատկառանք , ոչ խոզի խայթ և ոչ սրտի զգացում չեն կարող ներդործել նորա վրայ , հետեւաբար այսպիսի մարդէ մը ամեն չարիք յուսալի է , եւ ահա այն պատճառն որ շատ անգամ , մի մարդոց երեսէն բաղմաթիւ մարդիկ աղեալից և տառապանաց կ'ենթարկին . շատեր նորա վայրագ անգիտութեան զոհ կ'երթան . շատ պարկեցա և երջանիկ գերդաստաններու խաղաղութիւնն ու անդորրութիւնը վեր ՚ի վայր կը յեղացընի , բոլորովին հակառակ Աստուածային այն ամենաբարի նսպատակին , որ մարդը մարդով երջանիկ ընելու բարձր խորհրդով շնորհած է նմա այնքան շնորհ , յարմարութիւն եւ կարողութիւն :


Խոկ արդ , ինչ է մարդոց բնաւորութեան , զգացմանց և կենաց մէջ տեսնուած այս անհուն եւ սոսկալի տարբերութեան պատճառը , ոչ ապաքէն ամենին եւս մարդ են , ոչ ապաքէն ամենին և մի և նոյն բարձր նըպատակի համար գոյութիւն և կեանք կը ստանան , ոչ ապաքէն ամենին եւս մի և նոյն գեղեցիկ կիրքերով օժտեալ . այնպէս յաշխարհ կը ծնին , ինչ է պատճառն ուրեմն , որ մին հրեշտակի նման բարի և տառբինի կը լինի , իսկ մի ուրիշն սատանի նման չար եւ մոլի . մին

եղբայրական և մարդասիրական ազնիւ զգացմամբք վառուած առաքինսական մէծամեծ դործոց կը ձեռնարկէ . իսկ մի ուրիշն՝ վայրաքարշ մեղկութեամբք համակուած, զզուելի աղաեղութեանց մէջ կը թաւալի . մինչ գթութեամբ և պրովլ ցոււած վիշտ և տառապանք կ'օրոնէ սփոփիւլու , իսկ մի ուրիշն անգթութեամբ և ատելութեամբ դադանացած , մարդ կը վնառէ չարիք և վիշտ հասցնելու , վերջապէս մին այլոց բարիք ընելու համար իւր կեանքը կը նուիրէ , իսկ մի ուրիշն , իւր բարեաց համար այլոց կեանքը զոհելու ամենեւին չը խղճար . երբ այս ամենը նկատողութեան առնելով կը հարյնենք թէ ինչ է պատճառը , անմիջապէս յերեւան կը գոյ դաստիարակութեան և կը թութեան խնդիրն , յորմէ միայն կախեալ է մարդոց կատարելագործութիւնը , արժանապատուութիւնը եւ բարձրութիւնը . միայն գաստիարակութեամբ կատարելագործուած մարդն կընայ այն վսեմ կոչման հետեւիլ , որուն համար ստեղծուած է . դաստիարակութիւն եւ կը թութիւն հարկ է մարդոցն , ոչ թէ միայն արտաքին արուեստական ուսմոննց մէջ , այլ մանաւանդ սրտի և հոգւոց մշակութեան , պարտուց և իրաւանց գիտութեան եւ Աստուածային երկիւղիւղարգացման մէջ . այն մարդու սրտի եւ հոգւոցն մէջ , որ ՚ի մանկութենէ սերմանուած չէ Աստուածային երկիւղիւղի և սիրոց սերմաննքն , քրիստոնէական պարտաւորութեանց սկզբունքներն և իւր հասակի հետ միասին դարդացած եւ բարդաւածած չէ զդուշաւոր հոգաւարութեամբ , այնալիսի մարդուն սիրոն և հոգին միշտ ամայի և անքեր կը լինին , որոց մէջ հետզհետէ չարութեանց և անտառակութեանց վետուակար սերմաննքն ծլլլ կըսկին , որք հետ-

շնետէ նորա հասակին հետ միասին ամելով այնալիսի խոր արմատ կը ձգեն , զորս ժամանակէն յետայ արմատաքի խել շատ դժուար կամ բոլորովին անհնար կը լինի , ուստի պէտք է օր ամեն մարդ իւր բոլոր կենաց մէջ զդուշութեամբ հոգ տանի , օր իւր սիրոն ու հոգին միշտ առաքինութեամբ զարդայնէ և այս ուրիշ բանով չը լինիր , եթէ ոչ Ս . Գիրք ընթեռնոլով , Աստուածոյ կամաց , պատուիրանաց , և օրինաց վերահասու լինելով , նորա սէրն և երկիւղը մեր հոգւոց մէջ անչինջ կերպիւ տպաւորելով ,

Ահա այս տեսակ Աստուածային գիտութեան կրթութեամբ միայն կը նայ կատարելագործութիւն մարդ մը . այսու միայն կարող կը լինի հետի միալ վեսակար և նուաստացուցիւ մոլութիւններէ , այսու միայն կարող կը լինի մարդ արժանապայել կերպիւ ապրիլ աշխարհի վրայ , այսու միայն կարող կը լինի այնալիսի արդիւնաւոր կեանք վարել օր իւր յիշատակը անմահացնէ երկրի վրայ և այսպիսի երկիւղած աստուածապաշտ եւ բարի մարդ լինելու համար անհրաժեշտ հարկ է , օր միշտ Ս . Գիրքը ընթերցասիրեմք և զայն կատարելապէս ուսանինքն , նորա տրամադրութեան համեմատ ըգմեղ միշտ բարութեան վարժեցնեմք , որպէս զի կարողանանք ի բարի պատուին սեր արտադրել :

Գ . Ա . Շահանեան :



ԱՍԴԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ Չ

Ա

Արուսեակն և Փայլածուին նման
մերթ առաւօտները՝ արեգական ծա-
գումէն առաջ և մերթ երեկոյները՝
մուտէն յետոց կը տեսնուի : Սորա պար-
բերական ճօճումներն արեգական այս
կամ այն կողմը ունին աւելի մեծ լոյ-
նութիւն և երկայն տեւազութիւն . և
այս զանազանութիւնը յառաջ կը գոյ
անափ , որ Արուսեկին ընդ մէջ երկրի
և արեգական գծած ոլորտը աւելի
մեծ է : Քանի Փայլածուինը , և առաջնորդն
ոլորտի կեդրոնազնցութիւնը՝ շատ
ակար . այնպէս որ բոլորակի շրջանա-
կէն շատ նուազ կը տարբերի :

Արուսեակը աւելի յաճախ և գիւ-
րին կը տեսնուի պարզ աչօք քանի թէ
Փայլածուն . որովհետեւ արեգական
ճառագայթներէն աւելի շատ կը հե-
ռանայ , որով ազատ կը մնայ վերջա-
լուսոյ և արշալուսոյ լցուերէն : Սորա
արեգական արեւելքան և արև մուտան
կողմն ունեցած ամենամեծ խոտորու-
մներն մինչեւ 48° կը հասնի : Երբեմն
իւր յօդակցութեանց ատեն ալկը տես-
նուի , երբ իւր լայնութիւնը , կամ որ
նոյն է , արեգական վերին և սատրին
կողմն ունեցած բարձրութիւնը՝ նը-
կատմամբ երկրի ոլորտի մակարթա-
կին բաւական մեծ լըլայ :

Նախնիք Արուսեկին երկու անուն
կը տասցին երբեմն արեգական ծագու-
մէն առաջ և երբեմն մուտէն յետոց
տեսնուելուն պատճառաւ . որովհե-
տեւ ՚ի սկզբան տարբեր աստղեր կը
կարծէն , ինչորէս Փայլածուն : Առա-
ւոտները երկւցովը՝ լուսին (lucifer)

կը կոչէն , երեկոյները երեւ ցողը՝ գի-
ւերալոր (vesper) . և այս է ասու հովե-
լուուածը :

Ո՞վ չը ճանաչեր հովուի ասողը .
ո՞վ չէ նկատած նորա Ճնրմակ , քաղցր ,
կենդանի և շատ քիչ անգամ պալպա-
ջուն լցոր , որ երեւմն այնուով խիս-
կըլըս , մինչեւ երկրային առարկայնե-
րը կ'սուռերէ : Երբ թեթեւ ամպ մի
պօղէ զԱրուսեակլը , նորա զօրաւոր
լցոր կը հաւաստէ մալրակին ներ-
կայութիւնը լուսաւոր մանեակի կեդ-
րոնին վերայ . որ կը ձեւանայ զինքը
ծածկոլ ամպոց լուսաւոր մասմիկնե-
րէն : Այս պարագայներուն մէջ Ա-
րուսեակի լցոր այնչափ վառվառուն է , որ
մինչեւ անգամ հասարակ աւուր ժա-
մանակ անս մնելի կըլըս : Վերջուուէս
երկնից բավանդակ աստեղաց մէջ ամե-
նասպիտակ և ամենալուսաւորն է Ա-
րուսեակլ :

Սորա երեւութական շարժումը
աստղագրոց կամրին վերայ , նման
է Փայլածուի շարժման և կը բացատ-
րուի նման եզանակաւ . ուստի զանց
կ'առնեմք : Ներքին կամ վերին երկու
յաջորդական յօդակցութեանց միջոցն
է 584օր միջին հաշուով , ասիկայ մալրա-
կին համբնթաց թաւալման տեւողու-
թիւնն է : Գալով աստղային թաւալ-
ման , գրեթէ 225 օրէն (կամ որ միշ-
տըն է $224^{\circ} 16^{\circ} 8^{\circ}$) կը կատարէ . հե-
տեւաբար Արուսեկի տարին կը բաղ-
կանաց 225 օրէն , որ երկրային տար-
ւոյն երկու երրորդէն քիչ պակաս է :
Թաւալման շարժմամբ գծած կոր շր-
ջանը բոլոր մոլորակաց շրջաններէն ա-
ւելի մօտ է շրջանակի ձեւոցն . հետե-
ւաբար արեգակը քիչ հեռու կ'ըլայ
նորա ոլորտի կեդրոնէն : Երկրի արեգա-
կին ունեցած հեռաւորութիւնը մէկ
սեպելով Արուսեկի մեծագոյն , միջին և
փոքրագոյն հեռաւորութիւներն կ'ըլան :

Հեռաւորութիւն մեծագոյն . 0.72828
 " միջին . 0.72333
 " փարբագոյն . 0.71838
 վերածելով հազարամետրի կ'ըլլան
 հեռաւ մեծագոյն . 107700000 հազ. մետր
 " միջին . 107000000 "
 " փարբագոյն . 106300000 "

Միջին հեռաւորութիւնը մի շրջանակի շառաւիղ համարելով՝ դիւրութեամբ կը գտնեմք նոյն շրջանակին որքանութիւնը . վասն զի ըստ երկրաշափական սկզբանց՝ շրջանակի մը արամագծին առ շրջանակին վերաբերութիւնը ըլլալով 3.1416 . շրջանակը կ'ըլլայ 107000000×2×3.1416=672 միլիոն հազարամետր . ուրեմն Արուսեկի օրական արագութիւնն է 3 մ'լիոն հազարամետր . և երկվայրիենականը՝ 34.6 . Փայլածուն մէկ երկվայրիենականը՝ 46.8 հազարամետր . իսկ երկիրը 29.8 ինչպէս կը տեսնուի . Արուսեկի արագութիւնը՝ Փայլածուի արագութիւնէն նուազ . իսկ երկրի արագութենէն սասափիկ է . Պէտք է միանեգամընդ միշտ գիտնալ , որ մոլորակ մի որչափ հեռաւ լինի արեգակէն այնշափ գանդաղ կը կատարէ իւր շարժումը . ընդհակառակին որչափ մօտ ըլլայ՝ շարժումն եւս այնշափ արագ կ'ըլլայ : Այս բոլոր մոլորակաց վերաբերալ ընդհանուր և անփոխիս օրէնք է . հետեւաբար մոլորակի մը արագութիւնը մերձակէտին վերայ՝ սասակագոյն է . հեռակէտին վերայ՝ տկարագոյն :

Արուսեկի ոլորտի մակարթակը երկրի ոլորտի մակարթակին ըստ համաստաշաճիր , այլ անոր հետ 3° 23' հակմամբ անկիւն մի կը կազմէ . երկրէս ունեցած հեռաւորութիւնը եւս միշտ մի և նոյն չէ . որովհետեւ երբ իւր ներքին յօդակցութեան , կամ որ նոյն է երկրի և արեգական մէջ տեղն

ըլլայ , շատ մօտ կ'ըլլայ երկրին . իսկ ընդհակառակին վերին յօդակցութեան մէջ եղած ատեն՝ շատ հեռու կ'ըլլայ . և այս երկու ծայրագոյն հեռաւորութեանց տարրերութիւնն է 217 միլիոն հազարամետր . որովհետեւ երբ մոլորակը վերին յօդակցութեան մէջ է , երկրէն ունեցած հեռաւորութիւնը կ'ըլլայ 1.74 . երկրի արեգակէն ունեցած հեռաւորութիւնը միութիւն սեպելով . իսկ ստորին յօդակցութեան մէջ եղած ատեն , հեռաւորութիւնն է 0.26 . Արդ՝ երկրի արեգակէն ունեցած հեռաւորութիւնը 153 միլիոն հազարամետր ըլլալով՝ Արուսեկին երկրէն ունեցած մեծագոյն և փարբագոյն հեռաւորութիւններն կ'ըլլան , 257 և 40 միլիոն հազարամետր . որոց տարբերութիւնն է 217 միլիոն :

Բ.

Արուսեկակը եթէ երեկոյին նայիմք բաւական զօրաւոր դիտակով մի , պիտի տեսնեմք լուսաւոր սկաւառակի մը ձեւով գրեթէ կլոր , որ օր ըստ օրէ կը տափակնայ դէպ ՚ի արեւելեան կողմը : Արեւելեան մեծագոյն նուազման մէջ կէս բոլորակի ձեւով կը տեսնուի , ինչպէս լուսինը՝ առաջին քառորդին մէջ . յետայ գոգաւոր մահիկի ձեւով , որ երթալով կը նրբանայ և ՚ի վերջ արեգական ճառագայթներուն մէջ կ'աներեւութանայ : Այնուհետեւ եթէ առաւ օտները՝ արշալուսոյ ասեն դիտեմք , մի և նոյն լուսներեւոյթները կը տեսնեմք , բայց հակառակ կարգաւ , այսինքն արեւմունք մեծագոյն նուազման մէջ լուսներեւոյթը մահիկի ձեւէն կիսաբոլորակի կը մանէ և հետըզ հետէ լուսաւոր մասը կ'ամի . բայց մոլորակի երեւութական տրամագիծը այնշափ աւելի կը նուազի , որշափ

լուսներեւ ցթը ամբողջ բողոքակի կը
մօսնաց :

Արուսեկի լուսներեւ ցթները բո-
լորովին նման են Փայլածուի լուսնե-
րի ու թից և կը բացատրուին մի և նյոյն
եղանակաւ . միայն թէ որովհետեւ ո-
ւածնցն երկրէս ունեցած հեռաւո-
րութիւնները շատ փափախական են ,
ուստի առկէ հեռաւու փափախութիւննե-
ներն ալ ՚ի մասին մոլորակի երեւու-
թական տրամագծին՝ շատ զգալի են .
և որովհետեւ Արուսեակը՝ Փայլածու-
էն շատ աւելի կը հեռանայ արեգա-
կան արեւելեան և արեւմտեան կոչ-
մը , ուստի այս պատճառաւ իւր լուս-
ներեւ ցթներն ալ աւելի դիւրու-
թեամբ կը տեսնուին : Այս երեւ ցթնե-
ները 1610 էն սկսեալ Գալիլէոս նկա-
տեց և ասոնցմէ հետեւցուցաբիեզերաց
դրսւթեան վերայ Կոպեռնիկի տեսու-
թեանց ձշմարտութիւնը և Պալոմէո-
սի գրութեան ոչնչութիւնը (1) :

Ասացինք վերեւ , որ Արուսեակը
երբեմն այնչափ պայծառ կը փայլի ,
մինչեւ կէս աւուր ժամանակ տեսա-
նելի կ'ըլլայ . Հալանտ կ'ըսէ , որ “1750ին
ականատես եղաց այս երեւ ցթին եւ
ողջոն Փարիզ զարմացման մէջ էր , հե-
տախուզութեամբ գաայ , որ նման ե-
րեւ ցթ մի տեղի ունեցած էր 1716ի
Յուլիս ամսայ 10 ին և ըստ Պ . Հալէյի
Համարայի ժաղացութը հրաշք կը
համարէր ո : Հաս Պուլարտի Յորակօ

և սայար և նման դիտողութիւն մի կը
միշտակէ , որ Տիգրանուարի Ժամանակ
աեղի ունեցած է : Այս երեւ ցթին
տեղի ունենալու նպաստաւոր պարա-
գայները կախումն ունին մզգործիկ
լուսներ : Եցթներէն , արեգակէն ու-
նեցած հեռաւորութենէն և մեր միթ-
նոլորտի զառութեան վիճակէն :

Արուսեկի երեւութական տրամա-
գիծը շատ քիչ տարբերութիւն ունի
երկրի երեւութական տրամագծին .
որովհետեւ մի և նյոյն հեռաւորութե-
նէն նայուելով՝ Արուսեկինն է 16°. 9.
իսկ երկրինն է 17°. 8. կը հեռաւի ու-
րեմն , որ Արուսեկի միւս տարածու-
թիւններն ալ շատ չեն տարբերիր . և
ահաւատիկ եմէ երկրի համապատաս-
խան տարածութիւններն մուլթիւն
սկզբնք , Արուսեկինը կ'ըլլան ,
տրամագիծ Արուսեկի . 0.950
մակերեւ ցթ ॥ 0.900
ծաւալ ॥ 0.856

Եթէ երկրի տարածութիւններն
իրենց բուն քանակութեամբ առնեմք ,
այն ատեն Արուսեկին բուն տարածու-
թիւններն կ'ըլլան բոլոր թուով .
տրամագիծ . 12000 հազարամետր
շրջագիծ . 38000 " "
մակերեւ ցթ . 552390400 "

Ծանօթ մօլորակաց մէջ միայն Ա-
րուսեակին է , որ երկրի տարածու-
թեանց մերձաւոր տարածութիւններ
ունի : Ինչպէս Փայլածուն , նյոնչափէս
Արուսեակը իւր ներքին յօդակցու-
թեանց ժամանակ երբեմն արեգական
սկսուառակի վերայէն կ'անցնի . այս
անցքերը որչափ որ խիստ կարեւոր
են դիտողութեանց համար , նյոնչափ
եւս հազարամետրէալ . Ուրիշ առթիւ-
մակերամանաբար կը խօսիմք Արու-
սեկի նախկինն և 1882 ին պատահելք
անցից վերաց :

(1) Բայտ Պալոմէոսի գրութեան Արուսեկի ծի-
րը կը շնչառաւէր վերկիրը , որ տիեզերաց կեզրո-
նին փայ անշարժ էր . և այս ծիրն էր ընդ մէջ ծրից
Փայլածուի և արեգական : Եթէ ձշմարիս մնէր
այս գրութիւնը . երբէք կորեկի չէր մնէր . որ Ա-
րուսեակը նկատմամբ երկրին արեգական հակառակի
կողմն անցնէր և ոչ կարող էր շարձնել երկրին իւր
լուսաւորեալ կիսագունդը . մինչդեռ այսօր բոլո-
րովին առոր հակառակն է . վասն զի մօլորակը իւր
վերին յօդակցութեան ատեն լուսաւոր սկաւառակի
պէս կը տեսնուի :

գ.

Տամբինիկ Գաստինի ղիտելով Արու-
սեակը իւր յարմար դիրքերուն մէջ յա-
ջողեցու 1666/ն և 1667/ն աւեսնել ինչ
ինչ մթին բժիր նորա սկսւառակին վե-
րայ, և այս բժերուն մին, որ մօտէր լուսոց
և մօւթեան բաժանման գծին, մաս
խնամով ըննելով հետեցուց մոլորակի
հողովական շօրժութը. 23 ժամւ եւ
20 վայրկենի մէջ⁽¹⁾: Տ. Գաստինի ղի-
տապութիւններէնյետոց Սդրութեր(1788
-1793) և հռովմէական աստղաբաշխ
Վիգո(1840-1842) մանրախոյզ դիտո-
ղութեամբ աւելի ճշգութեամբ որո-
շեցին Արուսեկի հողովան տեւողու-
թիւնը, որ է 23 ժամ և 21 վայրկեան.
Երկրի հողովան տեւողութենէն 34
վայր, և 40 երկվայրկեան նուազ:

Այս է Արուսեկի աստղային օրը.
Խոկ տարին կը բազկունաց 231 հոլովու-
մէ կամ աստղային օրէ. և հետեւա-
բար կը պարունակէ դրեթէ 230 արե-
գուկեային օր, որոց միջին երկայնու-
թիւնն է 23 ժամ 27 վայրկեան և 5
երկվայրկեան, աստղային օրէն 5 վայր.
և 42 երկվայրկեան աւելի երկայն: Հո-
լովման երկվայրկենական արագութիւ-

(1) Այս դիտողութիւնն 60 տարի յետոյ, այն
է 1720/ն Պիտանցինի հռովմէական աստղաբաշխը
նկատեց մթին բժերու շարք մի, որոց շարժմանց
քննութեամբ կարծեց խելամուտ ըլլու Արուսեկի
հողովան, որ իր թէ 24 աւոր և 8 ժամեւան
մէջ կը կատարուէր: Բայց Յ. Գաստինի, որդին
Տամբինիկ, իւր հօրը և Պիտանցինի դիտողութիւն-
ները քննելով և համեմատելով անոնց իրարմէ ու-
նեցած մէծ տարբերութեան պատճառը դատա, Պիտանցինի սխալը յառաջ եկած էր անտի: որ այս
դիտունը՝ մի և նշյ բիծը նկատած էր նույն դրից
մէջ մօտած յետ 23 հողովական շարժման: որոց իւ-
րաքանչերին տեւողութիւնն էր 25 ժամ և 22
վայրկեան: Բնադիս կը տեսնափ, վերջին թիւը՝ 1
վայրկեան տարբերութիւն ունի Յ. Գաստինի թը-
ւէն, 1840/ն 1842/ն Վ. իշտափ ըստ դիտողութիւն-
ները ամեն կատած ցրեց:

նըն է 452 մէջը, դրեթէ հաւասար
երկրի հողովական արտգութեան նոյն
պէտ զանգուածը և խոռոթիւնը շատ
քիչ կը տարբերին երկրի զանգուածէն
և խոռոթէննէն: Այս համանական
թիւններէն կարելի է հետեւցնել, որ
Արուսեկի բեւեաններուն վրայ ունի
ցած ասփարկութիւնը, որն որ հո-
լովմէն յառաջ եկած է, հաւասար
է երկրի բեւեաց ասփարկութեան:

Ուշադի որ Արուսեակը և երկիրը
այս բնական պայմաններով իրարու շատ
կը նմանին, բայց ուրիշ նկատմամբ ի-
րարմէ շատ կը տարբերին: Մինչդեռ
երկրի հողովան առանցքը ծիր խա-
ւարմանի մակարթակին վերայ 66°5'
անկեամբ հակած է, Արուսեկի հողով-
ման առանցքը ըստ Սդրութերի 45° հա-
կումն ունի իւր ծրի մակարթակին վրայ:
այս պատճառաւ տունդեան և զիշե-
րոյ երկարութիւնը շատ կը տարբերի
ըստ եղանակաց եւ ըստ լոյնութեան
մեր տունդեան: և զիշերոյ երկայնու-
թիւննէ: Այս մը ըրակին վերայ միոցն
երկու տեսակ գոտի կայ, սառօւցեալ
և արեւադարձային գոտիներ, անոնք
եւս մասամբ իրարու շփոթած: Բնեւ-
եամական երկայն զիշերներն ու ցերեկ-
ները 115 աւուր տեւողութիւն ունին:

Որովհեաւեւ: Արուսեակը արեգա-
կան շուրջը գրեթէ շրջանակածէւ ծիր
մը կը գծէ, այս պատճառաւ եղանակ-
ները անոր վերայ հաւասար են, արե-
գուկին ունեցած հեռաւորութեանց
տարբերութիւնը շատ աննշան է, մի-
այն թէ ասոր վերայէն արեգական ըս-
կաւառակը աւելի մեծ կ'երեւի քան
թէ երկրէն, և իւր ընդունած լուսոցն
եւ ընթանած խտութիւնը՝ երկրի
ընդունածին կը կինն է:

Թերեւս Արուսեակը շրջապատեալ
լինի կարի իսիտ ամոգամածային մթնո-
լուրաով մի, որ կը մեղմէ նորա հակո-

Առակ եղանակոց խասութիւնը : Այս
ենթադրութեան հաւանականութիւն
ար յառաջ եկաւ 1761 ի արեգական
վերաբեն ըրած անցից դիտողութենէն :
որովհետեւ անցից ժամանակ տառապին
սեւ սկավառակը շրջապատռած կ'եւ-
րեւէր ամօքամօծացին մանելիով . աս-
կից զօտ մի և նոյն վայրկենին մոլո-
րակին սկավառակը մասամբ արեգա-
կան վերաց էր և մասամբ արտաքոյ
սկավառակին . արտաքին տղեղին ե-
զրոները կ'երեւէին լուսաւոր մանեա-
կով շրջապատռալ : Այս երեւոյթենեւ-
ը կը հաւասառեն որ Արուսեակը ունի
կարի թանձը միջնոլորտ մի :

Ներքին յօդակցութեանց ժամա-
նակ Արուսեակը կ'երեւէի կարի նուրբ
մոհիկի ձեւով , զոր այլ և այլ գիտով
ներ կ'ոս բոլորակէն տւելի գտած են .
Սդրութէր , որ առաջնորդ եղաւ այս ե-
րեւոյթը դիտողներէն , հետեւցուց մո-
լորոկի շուրջը միջնոլորտի գտութիւնը .
իսկ լուսաւոր մասէն արտաքոյ միա-
ցած մասի տեսանելիութեան պատ-
ճառ ուսպեց ցրեալ լոյս մի նման այն
լուսոյն , զօր երկրի վերայ վերջուցսե-
րը կը պատճառեն : Մի և նոյն երեւոյ-
թը 1857ի Մայիս ամսոյն մէջ Հ. Սէգ-
գի եւս դիտեց և նման եղանակաւ մի
բացատրեց : Սդրութէր Արուսեակին վե-
րաց լիոներ եւս տեսած և շափած է

ըստ իւր դիտողութեանց , որոց բարձ-
րութիւնը մինչեւ 44 հազարամեդր կը
դնէ . թէեւ անկարելի չէ այս , բայց
այնքնազիտական մանրամասնութիւն-
ները , ուսկից որ Արութէր իւր չա-
փերը հանած է . այնչափ գյուղարին
դիտողութենէ մի յառաջ եկած են .
եւ տակաւին անսնց իրականութեան
վերայ եւս այնչափ անստուգութիւն-
ներ կան , որ ոչ ներելի է ընդունել և
ոչ մերժել , այլ հարի է սպասել , որ նոր
դիտողութիւնները հաստատեն :

Պ. Հըկինս լուսապատկերական վեր-
ըւծութեամբ Արուսեակի շուրջը մըթ-
նոլորտի մի գոյութիւնը քիարսղացաւ
հաստատել . այս մասին Հ. Սէգգի տ-
ւելի յաջաղեցաւ . որովհետեւ այս մո-
լորտի լուսապատկերին մէջ երիզնելը
նշմարեց համանման երկրացին միջնո-
լորտի ընեղէն շոգուց երիզներուն , ո-
րով հետեւցուց ոչ միայն միջնոլորտի
մի գոյութիւնը , այլ և նման կազմու-
թիւն ունենալը մեր միջնոլորտին հետ :

Ա. հաւասոիկ այն աշխարհը , որուն
այցելեցինք Փայլածուէն յետոյ , որ
թէեւ մեր աչքին լուսաւոր կէտէ մի
տարբերութիւն շունի , բայց գիտու-
թեան և գիտանց համար աշխարհ մի
է մեր երկրին պէս , և շատ պարագա-
ներով բոլորովին նման անոր :

Մ Ո Վ Ս Է Ս

Ի Վ Ե Ր Ա Յ Զ Ո Ւ Բ Թ Յ Ն Ն Ի Լ Ե Ա Յ

Ք Ա Ր Ք ի մ , յայգոյն նախ նըսոցը քանի՞ ցրավն են ալիք ,
Ե լ է ք հետոցս ըդկընի , արտունան համագչի յիւր իրղիկ ,
Ա փունքս են լուռ ու ա՛ շլշունչ :
Հ ա զ ի ւ . Մ ե մ ի ի ս խ ա ն ա յ ն շ ա ն ի դ յ ս ի յ ն ա յ ,
Ո ւ ը ն ի թ թ ու ա թ ու փ հ ա լ ա ն ե ւ ա ր չ ա ն ա յ ,
Ք ա ն ի ս ։

Հոյլք արուեստից յարքունիս փայլ ըդիմայի շողողան .
Այլ ծաղկալից այս ախունք քան զՊորժիւթեայ լսգարան .
Մոգեն զաշկունս իմ յաւետ .
Սիրեմ սիրեմ տարփատենչ զեթերական երգս անքաւ .
Եւ քան զբուրմունս անուշից ոսկեձեղուն ընդ յարկաւ .
Զեփիւռին շնչնչ խնկաւէտ .

Քանի վլճիտ են երկինք , քանի եւ ծուփքս այս շքքեղ .
Թո՞լ ծալ ՚ի ծալ ծըփայցեն կապոյտ կամարքդ լսնջագեղ .
Թըփոյս ՚ի ծայր թաւախիտ .
Բարձէք ըզթագն յիմ վարսից եւ զդըժահի քողս ՚ի դիմաց .
Կամիմ ընդ ձեղ ՚ի սերկեան ՚ի կարկաջուն ծոց ալեաց
Կայթս հարկանել յահուր թինդ .

Փութասցուք օ՞ն . . . այլ զի՞նչ բիբքս յայգածին բալս անդ պղսոր
Նշմարիցեն յանկարծոյն . Պիշ պի՞չ ընդ ծիրդ հեռաւոր . . .
Մի՞ զոփայք կոյսք դողդոջուն .
Իցէ թերեւս դա զառամ արմաւենւոյն կոճըլ դոս ,
Որ ՚ի ծոլ կոյս ընդ ամայս վարեալ ալեօք փրփրահոս
Գայ տալ բրդանց զիւր ողջոյն .

Կա՞ զի՞նչ ասեմ , թէ չկցէ երբէք տեսիլս առ աչօք ,
Գա լսստափայտն է Հերմեայ կամ իսխի գալար կոնք
Թեւս ՚ի թեթեւ հողմավար .
Այլ ՚չ , խաբիմ . անդ ՚ի կուր թեթեւ մանկիկ մի քնիցը
Նինջ քաղցր առնու յանդորրու իբր ՚ի ծրդիս մօրն անոյշ
՚ի ծոց ալոյն թուլատարք .

Կա՞ իսաղող , եւ տապան՝ ճօճուն մահճացն իւր ՚ի քուն
Երեւի զերդ ՚ի ծըփինս ընդ մըկանունս երերուն
Բյոն ըսպիտակ տատրակին .
Կայ անդ ՚ի դոյզն ինչ տախտակ թափառ հողմոյն ըստ հաճոյս
Կոհակաշարք ՚ի թմբիր , ու առ ոտս անդունդ լայնափոս
Գոգ որըէ զնա յիւր շիրմին .

Զարթնու ահա , ճեսլ տուք օ՞ն Մեմփեայ կուսանք նաղելիք .
Հա՞ ճիչ բառնայ . . . ա՞հ , ո՞ր սիրտ ծնողին մատնեաց զիւր մանկիկ
Լոտ կամս ալեաց նրշաւակ .
Բազուկ առ մեղ կարկառէ , մոլնչն ալիք յամենուստ .
Ո՞հ , չիք նըմա այլ պատուար ընդդէմ մահուն որկորուստ
Գան զեղեգնեայ բեկ նաւակ .

Օ՞ն զնա յանդորր հանցաւք ողջ . . . ծընունդ արդեօք իցէ նա

Խորայէլքան հեգ աղին, եւ չլցէ հայր իմ դըմնեայ

Գոլ անմեզին հետամուտ.

Թշուան մանկիկ ոյր աղէտք յիս արկանեն խռով եւ հող,
Ես ինքն եղէց նըմին մայր . ինձ պարախցի զիւնաց լցա

Փօխան երկանց մայրագութ :

Զայս անդք յեղերը Նիլեայ ճառէր իփիա՝ յոյս թագին .

Մինչ դատերաց գիրգ երամ շուրջ պար առեալ խնդագին .
Հետոցն ըդհետ ճախրէին .

Անդ թագաղարմն այն կուսան, մերկ ՚ի քողցն ոսկեթել,
Ի նըշուլցն հարեալ գեղ ըզնաղուհեաց հողմն ընդել,
Խոսկայր զերգ կցմն ալէծին :

Փափուկ ոտիցն իւր ՚ի քիշ հեծէ երկիր շոմնդն յապշոպ.

Խանդաղատեալ ըզմանկաւն՝ շնչածփիկ սրտատրոփ
Ճեղ տայ ոտիցն երերուն .

Կողնու զնաւակին ալէծուփ, եւ խրոխտ թեթեւ ընդ բեռամիք .

Անդ զառաջին լընըւագ շուք ՚ի ճականն իւր անամբ
Խառնի յամօթ քնակասուն :

Ճեղբեալ զալիս հերձ ՚ի հերձ եւ զամբս հարեալ առաթուր,
Բերէ ընդ իւր յամբաքայլ զմանկիին ՚ի ջուրց մազապուր
Նամէտն ՚ի խիճ եզերաց .

Եւ քորք իւր կարգէ ըստ կարգէ յաշ անդ մանկան նորափթիթ
Ժմուեալ ՚ի ծաղը անուշալ՝ եւ ՚ի ճակատն իւր լըմիտ
Դրօշմեն համբորս ամօթլեած :

Հասիր ով ՚ի հեռուստ հերձեալ յերկբայս գժպլհի՝
Դիտես զորդեակի ակնապիշ ում կան երկինք հովանի,
Փութա եկ այսր իբր օտար .

Մի երկնչիր, յլնդգրկելու ՚ի ծոց սիրոցդ ըզՄոլսէն՝
Աւիւն խնդիցդ ու արաստուք մատընառ ոչ լիցին քեզ,
Քանզի իփիս չեւ է մայր :

Եւ մինչ այսպէս սիդաճեմ թեկն ՚ի թիկին բարեբաստ
Կոյսն այն թագին հօր պարծանք, ածէր զմանկիկըն նըւաստ,
Թացեալ ՚ի ցող մոյրական ,

Անդ ՚ի կամար արփենից երկնականու զօրաց խումբ
Ըդհոլաթեւսն առագաստ արկեալ գիմայ՝ Եին հուտ
Հնչեն տաւիղս անվախճան :

«**Մ**ի եւս Յակոբ հեծեծեր յերկիր սրմնդուխտ եւ նժդեհ .

Մի պիղծ յալիս Նեղոսի խառներ զալիսդ աննըսեհ .

Ափունք մնան քեղ Յորդանու .

Հասեալ է արդ հասեալ օրն յոր Աւետեաց յերկիր կոյս
Ընդ հենգն անգութ ոստիին թողեալ զֆեսեմ՝ տացէ խոյս
Զարմն յամըս ձիգ սպասարկու :

Մանկիկ այդ գիրք եւ վափուկ լքեալ ՚ի դազն ինչ ՚ի լսու,
Ընտրեալն իսկ է Ամասյի, գործի վրիժուց երկնասասաւ
Զոր հան ՚ի ջուրց կուսան մի,
Ո՛վ մահացուք ։ Եւք մերժէք խապառսարուռ զէնն Աստուած,
Ի միտ առէք՝ զիսրայէլ թափեալ որբանդ այդ ՚ի բռանց՝
Նիցի Փրկիւ աշխարհի ։

Վ. Հիմն

Ա. Ե. Կարապետիան

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵԱՆՔ

Արտաքին մարդոյ սկամութիւնն
ընելով, առիթ ունեցանք նկարագրել
համառօտիւ իւր սկիզբն, կաղմութիւ-
նը և յաջորդական աճումն մինչեւ ցր-
կէտ ծննդեան, ուստի կը սկսի կեանքը
աշխարհի վրայ : Արսինք ուրեմն այս
կետէն նկատողութեան առնել մարդոյ
կենաց տարբեր ջրաներն մինչեւ այն
տեղ, ուր հոգին կը պարտի բաժնուիլ
մարմէն, թողով զայն վերստին հա-
սարակաց զանգուածոյն, որում կը վե-
րաբերի :

Մարդոյ կեանքը, որ ժամանակի
առաւել կամ նուազ տեւական ջրան
մ՝ է, չորս հասակի կարելի է բաժառ-
նել, որք են, Մանուկիւն, Արբունք,
Այրուիւն և Ծերուիւն . թէեւ այս
չորս հասակներն անգետալի կերպով կը
փոփսիին և իրար կը յաջորդեն, բայց
իւրաքանչւրն իւր առանձինն պար-
բերութիւնը ունի :

Վ. Մանուկիւն:

Այս հասակը կենաց սկիզբն է.
և կը տեւէ ծննդենէն մինչեւ երկրորդ

ակռայ հանելը, որ սովորաբար վից
կամ եօթներորդ տարւոյն կը պատա-
հի : Եթէ կ'ուզենք մարդոյ տկարու-
թեան վրաց գաղափար մի ստանալ,
հարկ է նկատել զայն այն վիճակի մէջ,
յորում կը գտնուի նա ծննդենէն ան-
միջապէս յետոյ, Թշուառութեան և
ցաւոց սկատէր մը, ամեն կինդանի-
ներէ աւելի խեղճ և անզօր արարած
մը, անատակ իւր գործարանները ՚ի
կիր առնելու, անկարաղ իւր զգայա-
րանները գործածելու, շարժելու եւ
զինքն պահպանելու, կարօտ ըստ ա-
մենայնի օգնականութեան . անհաս-
տատ և գողդոջուն կեանք մը, որ ա-
մեն վայրկեան վերջանալ կը թուի . այս
ողօրմելի վիճակին մէջ մանուկը հեկե-
կանք և լալեօք հաղիւ կարող է յայտ-
նել իւր կրած վտերը, գոգցես բնու-
թիւնը կ'ուզէ յայտնել նմա, որ ծնած
է վտաց համար, և մարդկային դա-
սուն մէջ կը մոնէ, միայն նորա ցաւոց
և տառապանաց մասնակցելու համար:

Չը տատամնիմք ակնարկ մի ձգել
այս վիճակին վրայ, որ ամենայնի ըս-
կիզբն է, նկատեմք որբանը և օրոնեմք
թէ ինչ աստիճանու այս փափուկ մե-
քենայն, այս նորածին և կիսակենդան
մարմնը, կը ստանայ շարժումն, հաս-

տատութիւն եւ զօրութիւն :

Նորածին մանուկը կ'անցնի մի տարբէ ի միւսն, ելանելով իւր մօր արգանդի մէջ զինքը շըջապատող հեղուկէն, կը մօնէ օդոյ մէջ, որ անմիջապէս ներդործելով նորա գործարանոց վրայ կը պատճառէ ազգեցութիւններ և վատիր, որոց ասլացոց են մանկան ձերն ու աղաղակը : Մինչեւ քառասներորդ օրն, տակաւին հոգւոյ զգացումներ երբէք չեն նշանարուիր, աչքերը թէեւ բաց, այլ միապաղաղ և անշարժ են . գործարանները անկատար և անկարող տեսութեան զգացումն հաղորդելու . նոյն իսկ շշափումն, որ հանրական զգացում մ'է, շատ թերի ներդործութիւն ունի նոր ծնածի վրայ, իսկ ծիծաղ կամ լացք, որ հոգւոյ ներքին երկու գործողութեանց՝ հաճութեան և արհամարհանաց նշան են, երբէք չեն տեսնուիր մանկան վրայ, և ի սկզբան արձակած ձերն առանց արատասուաց լոկ աղաղակ են : Մարմնոյն մասունքները թոյլ և անզօր, ձեռք, ոտք, մատունք, և այլն, անշարժ և դողդոջուն . և այս քառասնօրեայ միջոցին մէջ միմիայն այնպիսի զգացմանց և շարժմանց նշաններ կը ցուցնէ, որք լոկ մարմնոյն կը վերաբերին և ամեն հենդանեաց հասարակ են :

Ծնած ատեն մարմնոյն մեծութիւնը հասարակօրէն 21 մատ և երբեմն առաւել կամ նուաղ կ'ըլայ . մորթը խիստ նուրբ, թափանցիկ և կարմրագոյն . մարմնոյն ձեւը կը օրիկէ և ուռուած, որ հետղիետէ կը նուաղի, քանի որ հասակն աճի . գլուխը համեմատութեամբ մէծ և մարմնոյն ամեն մասունքները խիստ փափուկ և անզօր :

Խիստ օգտակար սովորութիւն է լուալ մանուկը գաղջ լրսով, նախնիք և նոյն իսկ այժմ ցուրտ գաւառի բնա-

կիշները, պաղ ջուր կը գործածեն այս բանին . իսկ Լաբոնք, կը բարուի թէ, նորածին մանուկը ձիւնի մէջ կը ձգեն, և այս գործողութիւնը յաճախ կրկնելով կը վարժեցնեն, վասն զի կը հաստատեն թէ պաղ ջոյ բաղվիքները առողջ և զօրաւոր կը պահպաննեն կեանքը . այս սովորութիւնը Ամերիկայի Հնդկաց մէջ եւս տարածուած է . եւ նոյն իսկ արք և կանայք շարունակ պաղ ջոյ մէջ կ'ընկղմին երբ տկարութիւն, ջերմութիւն կամ թուլութիւն դդան որ և է պատճառներով :

Կաթնաբուծումն հարկ է ծնանելն առ նուաղն տասն ժամ յետոյ ըսկըմիլ, որպէս զի ժամանակ ունենայ երախայն ստամօքսի և Աղեաց մէջ գրանուած հեղուկներն, մաղասր և աւելրդը դուրս տալ . ապա թէ ոչ այս նիւթերուն հետ խառնուելով և դառնանալով կաթն վնասակար հետեւութիւններ կը պատճառէ, կը պատահի երբեմն, որ մանկանց լեզուակասպր խիստ կարճ ըլլալով անկարող կը լինին կաթն ծծելու, և հարկ կ'ըլայ այս պարագայիս մէջ, լեզուակասորը կտրել, որ դժուարին և զգուշալի գործողութիւն մ'է :

Հաղիւ թէ սաղմն արգանդի կապերէն արձակուած աղատութեան ասպարէզը կը մտնէ, և ահա նորանոր սեղմումներ և կապեր զինքը վերստին կը կաշկանդէն : Խանձարուրը կը պատէ զինքն, գլուխը անշարժ, սրունքն ու բաղուկները երկարագոււած եւ մնայուն հաստատութեան դատապարտուած . այս վիճակը, որչափ որ օգտակար կը թուի մարմնոյն ձեւն պահպաններու համար, այնչափ և առաւել վնասակար է . կ'արդիէ աճումն, կը յապաղէ զինացքն և երբեմն իսկ հըսկաղոց անհոգութեամբ շնչարդելութեան և վնասաբեր հիւանդութեանց

կ'ենթարկէ . Աեւերն եւ Ամերիկայի ազգերն առաւել կը յարգեն մանկան ազատութիւնը , քան այսպիսի պատասներով բռնաբարութիւնն :

Նորածին մանկունք սովորաբար քնանալով կ'անցնեն իրենց կեանքը . բայց այս քունը միշտ թեթեւ և ընդհատուած է : Աննդեան հարկը կը գերազանցէ այս հանգստեան ստիպողականութիւնն , եւ յանկարծ քաղցուն կամ վշուց առթիւյառաջ եկած ձեր կը յաջորդեն մանկան լուռ և հանդարտ վիճակին : Պէտք է ցերեկին գէթ երկու ժամն անգամ մի , իսկ գիշերը իւրաքանչեւր արթննալուն կաթնաբուծել : Բաց յայսմանէ հարկ է հոգտանիլ նաեւ որ մի գուցէ այլ վշտառիթ պատճառներով տեղի ունենայ աղաղակին , և որրանի ու մանկան լաթերն օրը մի քանի անգամ փախտել . որք քրտինքով եւ շոգիսով թացուելով , և մանկան փախուկ մորթին վրայ ներգործելով , շը կարծուածէն աւելի մեծ վոանգներ առթեն : Այս բանին համար , Հիւսիսային Ամերիկայի քնակիչք , տեսակ մի փայտի նուրբ փոշի կը ցանեն որրանի մէջ , որ խոնաւութիւնը ծծէ և միշտ կը փոխեն :

Միմիայն մայրական գորովանքն յարմար է այս ինսամոց և տքնութեան : Միթէ կարելի՞ է յուսաւ զայս վարձկան և շննական ստնատուներէ , որոց ոմանք երկար ժամերով անտարբեր կը մնան մանկանց չարաշար վիճակին և ոմանք չափաղանց անգութեամբ երբէք չեն զգածուիր նոցա աղաղակներավ , ու կը թողուն փոքրիկ վատաբաղդներն յուսահատական ձչերու մէջ , որոց հետեւութիւնն է հիւսնդութիւնն և բարեխառնութեան խանդարումն . իսկ ոմանք անհոգ և հեղդ ստնատուք եւս , այս աղաղակներու առաջն առնելու համար կը բաւականան որբանը շար-

մելով քնացնել մանուկը , առանց նորա անհանգստութեան պատճառը որոնելու : Բայց այս քունը ընդարձացում է միայն և անբնական , որ որրանի շարժմամբ՝ յառաջ կուդայ և անօգուտ լինելէ զատ վեասակար կրնայ ըլլալ , վասն զի այս նպատակաւ եղած յաճախակի որորումներն փսխունք , զիսոյ պտոյտ , և այն կը պատճառէն : Հարկ է , ինչպէս քնհատութեան , նցնապէս և չափաղանց քնանալոյն , որ ապշտութեան և զգացմանց բարեխառնութեան խանդարման նշանն է , առաջն առնելու հոգ տանել : Այս վերցին պարագային մէջ պէտք է արթնցը նել երախայն հաճոյական թեթեւ ձայներով և փոքրիկ շարժումներովու փայլուն իրեր ցուցնելով . որովհետեւ այս հասակին մէջ պիտի սկսին զգացու մներըն զարգանալ և ներգործութիւններ ստանալու ատակիլ :

Սովորաբար լուսաւոր և փոյլուն իրեր հաճելի են երախայից , և կը գըրաւեն նոցա հայեցուածքը . ուստի նայելու է որ այս տեսակ իրերը կամ լրաց կողմնական դրից մէջ չըլլայ մանկան նկատմամբ . որ ատեն միայն մէկ աշքով հայելով , միւսը սննօր և չի կը մնայ . այլ որրանը այնպիսի գիբրով ըլլալու է , որ լցուը կամ փայլունութիւնը մանկան երկու աշաց ալ հաւասարապէս տեսանելի ըլլայ :

Սնուցիչը առջև երկու ամիսներն , և եթէ մանուկը տկար կամ փափիկամարմին է , մինչեւ չորրորդ ամիսն ըստ ամենայնի զգուշանալու է իւր ստեանց կաթէն ուրիշ սնունդ տալ մանկան : Հողանտայի , Խտալիոյ , Տաճկաստանի և բոլոր Արեւելքի կողմը , տարի մը ամբողջ ստեանց կաթով կը մնուցանեն երախաններն . Գանսատայի վայրենիները մինչեւ չորրորդ և երբեմն վեցերորդ տարին կաթով կը մնուցանեն :

Այս սնունդը քաղցը կ'անցնէ , առանց մարսովութիւնն գործարանները վնասելու , որք հազիւ կ'ըսկիմին բացուիլ . Բայց եթէ հարկը պահանջէ սնուցի կամէն կտրել . պէտք է կենդանւոյ կամով կերակրել , աւելի լաւ համարելով որ գարձեալ ստիճներէն ծծէ , որպէս զի ծծուած կամը միշտ նոյն ջրմաստիճանն ունենայ . Կամէ կը բելին զինի հետղիւտէ վարժեցնելու է հաստատուն կերակուր ուտելու . կամով ալիւր եփելով , յարմար հեղուկի մէջ հաց թրջելով և կլեցնելով որոնք կը պատրաստեն ստամբուր հաստատուն կերակուրներ ընդունելու և մարսելու :

Կարող կամ Ա-ՇԵ-Ի ութը ակռաներն ամենէն առաջ կը բուսնին հասարակօրէն 7-10 երրորդ ամիսներուն մէջ . Բայց երբեմն աւելի կանուխ . տեսնուած իսկ են ակռաներով ծնած մանկունք : Առամանց սկիբը լինտերուն տակ խոռոշներու մէջ են , որք հետղիւտէ աճելով և լինտերը Ճեղքելով կը ցցուին : Այս գործողութիւնը , թէ և բնական , բայց ոչ նուազ ցաւելով և երբեմն վտանգներով կը կատարուի . Մանկունք կը կորուսանեն իրենց զուարթութիւնն ու ցնծութիւնը , միշտ տիտուր և անհանգիստ կը տեսնուին , իրենց լինտերը կարմիր և ուռած , որք կըսկիմին Ճերմկիլ երբ ստաման մղումը սաստկանալով կ'արգիլէ արեան շարժումն : Կարծես ըլոնութիւնը երբեմն իւր երկու զօրութիւններն միմեանց հակառակ կը լարէ . կը պատահի օմանց երախոյից վրայ , որ լինտերը ջղերու առատութեամբ պնդանալով , սասամանց մղման կ'ընդդիմանան և երկու կողմանն ընդդիմութիւնը այն աստիճան կը սաստիանայ , որ արեան սաստիկ բարբոքումըն , անտանելի ցաւ , և վշտալից մահ

կը պատճառէ : Այս պարագայիս մէջ հարկ կ'ըլլայ արուեստին զիմել և լին աերը Ճեղքել , որով ընդդիմութիւնը անհետանալով ատամն կը գանէ իւրանցքը :

Եաւ կամ Կողմանին չորս ակռաները առաջիններէն մէկ երկու ամիս վերջը կը բուսնին : Խսկ երկրորդ տարւոյն մէջ Ծամելայ կամ Աղջեայ 16 ակռաները կ'ըսկիմին երեւիլ :

Կտրող , Կաղմանական և Ծամելաց առաջին չորս ակռաները 5-7ր տարին կը թափին սովորաբար և տեղը ուրիշ ներ կը բուսնին կանուխ կամ ուշ : Առանց անկման պատճառ իրենց տակ գտնուած երկրորդական ստամանցը կիրքներն են , որք հետղիւտէ աճելով զանոնք գուրս կը մզեն . խակ մնացեալ ները չունենալով այս երկրորդական արմատներն , եթէ դիսուածով իշխան ալ , անոնց տեղ այլ եւս չը բուսնիր :

Ուրիշ չորս ակռաներ եւս , որք Ինսարութեան ադանունք կը կոչուին , ծամելաց ծայրերը կը բուսնին երիտասարդութեան ատեն , կամ մանաւանդ կանանց վրայ , ամեննեւին չեն երեւիր . որով ամբողջ ատամանց թիւը 28-32 հատ կը համարուի :

Մանկանց հիւանդութեանց մէջ յաճախագոյնն է Որդի ախուր . որ սնընդեան տեսակէն յառաջ կուգայ : Կամը որ ամենէն աւելի կենդանական զօրութիւն ունեցող սնունդն է , երբ չմարսուելով մնայ մանկան ստամբուսին մէջ , յառաջ կը բերէ կենդանի գոյացութիւններ եւ այնչափ բազմաթիւ որդեր , որմնամէ մանկան կեանքը կորըստեան երկիւղին մէջ կ'իյնայ : Ասոր համար լաւ կ'ըլլայ մանկանց նըւազ քանակութեամբ գինի խմցնել , որ որդերու աճեցումն կ'արգիլէ եւ մարմնայն զօրութիւնը կ'առաւելու :

Մանկանց կեանքը խիստ անհաս-

տառ և երկիւղայի է մինչեւ երրորդ տարին։ Լօնտրայի մէջ պատրաստուած մարդկային զանազան հասակին մէջ պատահած մահուանց ցուցակէն կը տեսնուի, որ ծեսած մանկանց 1/4 կը մեռանի առաջին տարուան մէջ, երկրորդ տարուան հասակին 1/5 ը. իսկ առջի երեք տարիներուն մէջ առ նըւազն կէօր :

Մանկան կենաց պահպանութեան ամենէն կարեւոր խնամքներէն մին է. կարելի եղածին շափ ստնտուի ըլ յանձնել և մօրը կաթով սնուցանել, Վասն զի մօրը արգանդին մէջ կաթի հիւթով անած և վարժած ըլլողով, օտար ստրնտուի կաթի տարբերութիւնը անախորժելի և վեսասկար կրնայ լինել, իսկ եթէ հարկ լինի անհրաժեշտ ըստընտուի յանձնել շատ գուշութեամբ հոգ տանելու է որ մանկան հաճցական և յարմար լինի նորա կաթը :

Տամներկու կամ տասնեւ հինգերորդ ամիսը մանկունք կ'ըսկաին թոթովիլ։ Ամենէն դիւրին հնչուածը ա. ի ձայնն է, որ միմիայն շրթանց բացուելովն կը կատարուի. իսկ է. ի. օ. ի. ձայներն պէտք ունին նաեւ լեզուի և շրթանց առաւել կամ նուազ շարժմանց, Բազագանիներուն մէջէն ամենէն դիւրին է. պ. բ. ճ. ի արտասանութիւնն որք միմիայն շրթանց փակում մի կը պահնջնեն. իսկ միւս բաղաձայները շրթանց հետ լեզուի առաւել կամ նըւազ դժուարին շարժումներ ունին։ Այս իսկ է պատճառոն, որ դրեթէ ամեն աղդաց մէջ, երախայից առաջին արտասանութիւնը պապա, բաբս, մամա, բաւերն են, որք ամենէն աւելի բնական ձայներէ կազմուած են :

Կան մանկունք որք երկու տարիէն կըսկսին արտասանել և կրկնել ինչ որ լսեն. իսկ կան ալ որ երկուքուէիս տարիէն կամ աւելի ուշ կ'ըստանան այս

ընդունակութիւնը : Սովորաբար կանուխ սկսողները աւելի յաջողակ կ'ըլլան արտասանութեան և ընթերցման մէջ :

Քաղելու կարողութիւնն եւս սովորաբար երկրորդ տարուան մէջ կրտանան երախայք և երբեմն աւելի ուշ։ Մարդկային տկարութեան պատեհը այս անզօր հասակը կը տեւէ մինչեւ 6. 7^ր տարին. որ տաեն ակռաւներն ալ կը փօխուին. և յորում, ինչ պէս տեսնուեցաւ, մանկան բոլոր պիտոյքը միմիայն սնանելու և աճելու համար է : Նախախնամութիւնը ամենիմաստութեամբ յանձնած է մանուկը այս անզօր վլամակի մէջ, ծնողական սիրոյ և խնամոց, թէ զայն պահպանելու և թէ մարդկային ընկերականութեան մէջ սիրոյ հուրը ՚ի ծննդենէ անտի բորբոքելու և միութեան կազը ամրապնդութեաւ աղադաւ :

(Երբակալիլ)

ԲՆԱԳԻՑՈՒԹԵԱՆ

ԵԿ ՏԻԵԶԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ Վ. Բ. Յ.

ՊԱՐՉ ԽՈՍԱԿՑՈՒԹԻՒՆ

(Եակունակութիւն, տես թիւ 51)

ԴԼՈՒԽ Ե.

ԱՐԵԳԱԿ

Խըր ծաւաց. — Երկրէս ունեցած ներառութիւննը. — Խըր ջերմութիւննը. — Առանցք, բեւեռք, հասարակած եւ. կիսագունաք երկրի. — Երկրի արեւական բոլորտիքն ըրած չարժումն. — Եղանակք:

ՄԱՐԻԱՄ. — Արեգակը մեղմէ շատ հեռու է :

ՕՐ. ԹԱԳՈՒՀԻ. — Ա. յեշամի հեռու է, որ եթէ շագեկառք մը ժամը 8 փարսախ կամ 32000 մէդր տեղ կարելով անընդհատ երթայ, երկրէս արեգակին համեմու համար 500 տարի պէտք է.

ՄԱՐ. — Եթէ այդշափ հեռու է, Բ'նչպէս զայն կը տեսնենք:

ՕՐ. ԹԱԳ. — Իւր շափազանց մեծութեան պատճառաւ, իւր ծաւալը՝ այսինքն մեծութիւնը, երկրի ծաւալէն, գրեթէ 1400000 անդամ աւելի մեծ է։ Առ այս գաղտնափար մը տալու համար գիցուք թէ գետնէն մինչեւ տան մը երկրորդ յարկը համար մեծ գունու մը ըլլայ, այս գունուոր նարնջէ մը գրեթէ 1400000 անդամ աւելի մեծ կ'ըլլայ։

Երեւակայեցէք ուրեմն թէ երկրագլուխէս 1400000 անդամ աւելի մեծ գնափի մը մեծութիւնն որշափի կրնայ ըլլայ, երկրագնուխէս, որ արդէն ձեղ այնշափ մեծ կ'երեւի։ Արեգական մեծութեան վրայ ձեղ ուրիշ գաղափար մ' ոլ տալու համար, ահառափիկ բաղդատութիւն մ' աղ, եթէ երկրին արեգակին կեդրանը զնենք պատուիլ մը մէջ տեղ եղած կուտի մը նման, այս պատուզին միջուկին հաստութիւնը լուսնոյ մէզմէ ունեցած 96000 փարսախ կամ 384000 000 մէդր հեռաւորութեան կը հառասարի. Նոյն խիլուսինը պատուզին մէջ ոլիսի գտնուէր իրեւ կորիո և այս կորիզէն մինչեւ պատուզին մաշկը, այսինքն լուսնէն մինչեւ արեգակին մակերեւոյթն եղած հեռաւորութիւնը դարձեալ 80000 փարսախ կամ 320000000 մէդր ոլիսի ըլլար։

ՄՈՒՐ. — Հապա ինչո՞ւ մէջ այնշափ մեծ չ'երեւիր։

ՕՐ. ԹԱԳ. — Իւր երկրէս ունեցած ահագին հեռաւորութեան պատճառաւ է, որ մեղ իւր խիլութեամբը չ'երեւիր. գիտէք արդէն, որ իր մը որշափի հեռու ըլլայ, այնշափ փոքր կ'ե-

րեւի։ Եթէ բարձր աշտարակիմի վլարայ ելած ըլլայիք, նոյն բարձրութեան աշտարակին ոոքքը գանուող մարդիկը փոքր տղայոց շափի պիտի տեսնէիք, Երբ իւր նաւակով մարդիկի տառելու յատկացեալ օդապարիկ մ' ուռեցնենք, ահագին բան մը կ'երեւի. տան մը շափի մեծ, բայց յեաց որշափի բարձրանայ, նոյնշափ փոքր կ'երեւի. քիչ ժամանակէն զինի ձեր գնափակին շափի, ի վերջո, եթէ շարունակէ բարձրանալ, փոքրիկ սեւ կէտ մը կըլլայ և վերջապէս ամեննեւին աննշնարելի։

ՅԱԿ. — Ի՞նչպէս կրնանք գիտնալ, որ արեգակին երկրէս այնշափ մեծ է և այնշափ հեռու։

ՕՐ. ԹԱԳ. — Ա. յն միջոցներով, ուրմէք ձեղ թերեւս առ այժմ գժուարին է հասկնալ։ Ժամանակէ մը յետոյ երբ աւելի մեծնաք, պիտի սորվիք թէ Բ'նչպէս արեգակին ծաւալը գտնուած և իւր երկրէս ունեցած հեռաւորութիւնը շափուած է. այն ատեն նոքնին պիտի կրնաք կատարել նոյն հաշիւները և ճշգութեան համազուիլ։

ՄԱՐ. — Ուրեմն արեգակը շատ տաքէ, վասն զի հակառակ մեր այնշափ իրմէն ունեցած հեռաւորութեան տակաւին կը տաքցնէ զմեղ։

ՕՐ. ԹԱԳ. — Դիտէք արդէն, որ կըրակի մ' որշափի մեծ ըլլայ, այնշափ շատ կը տաքցնէ։ Երեւակայեցէք արեգակին իւր խիկական մեծութեամբն (երկրէս 1400000 անդամ աւելի մեծ), և ենթագրեցէք, որ 7 փարսախ կամ 28000 մէդր թանձրութեամբ բարձրովին արձարծած և բօրբգրած գետնածութիւնէ կրակով ամեն կողմէն շրջապատուած ըլլայ, այս կրակին ջերմութիւնը գրեթէ արեգակի տուած ջերմութեան հաւասար կ'ըլլայ։

ՅԱԿ. — Ամարան և ձմերան պատճուն Բ'նչ է։

ՕՐ. ԹԱԳ. — Երկրիս արեգակոն բռ
լրտիքն ըրած ճանապարհորդութիւն
նը :

ՅԱԿ. — Ի՞նչողէս :

ԵՐ. ԹԱԳ. — Միթէ ձեզ քսի՞ , որ
Երկրն կլոր օդապարիկ մ' է , որ յա-
փակենապէս երկնից մէջ կը քջագայի ,
բոլոր բնակիչներն ալիւր հետ պարտ-
ցընելով :

ՅԱԿ. — Դուք ըսկը թէ երկրն ը-
ռալնանի մը նման արեգակին առ ցեւ
կը դառնայ և ցոյց տուիք թէ ինչպէս
այսու տիւ և գիշեր կ'ըլլայ (1) :

ՕՐ. ԹԱԳ. — Նատ լսւ , երկրը ը-
ռալնանի մը նման իւր վրան դառնալին
զատ կը դառնայ նաեւ արեգակին բռ-
լրտիքը . երկրն երկու շարժումն ու-
նի , կազմ խաղցողի մը նման , որ ինքն
իւր վրայ դառնալով մի և նոյն ժամա-
նակ սրահի մը շուրջն ես կը դառնայ :

ՅԱԿ. — Բայց այսու ի՞նչպէս ամառ
և ձեռո կ'ըլլայ :

ՕՐ. ԹԱԳ. — Հիմա պիտի տեսնէք :
Առնենք դարձեալ մեր մոմն ու նա-
րենջը : Մոմն արեգակն է և նարինջն
երկրը . դարձեալ գուլպայ հիւսելու
ասեղս նարնջն մէջտեղէն կ'անցնեմ
և կ'ըսկիմնարինջը դարձնել :

Նախ պէտք է գիտնալ , որ նարնջի
մէջտեղէն անցնող ասեղիս նման երկ-
րիս կեդրանէն անցնող գիծը , որոյ վրայ
կը հզովի երկրը , առանց կը կոչուի :
Երկրիս առանցքը հիւսիսէն գէոյ ՚ի
հարաւ ձգուած է , որոյ հիւսիս դար-
ձած ծայրը կիւտային կամ արջային բե-
ռեւ կը կոչուի , եւ հարաւ դարձածը
հարաւային կամ հակարչային բեռեւ : Երկու
բեռնեռներէն իւր ամեն կէտերով հա-
ւասար հետաւորութեամբ անցած մէծ
շրջանակ մը կը մտածուի . որ հասար-
կած կը կոչուի և երկրագունան երկու

հաւասար մասերու կը բամնէ , որոնք
կուսային եւ հարաւային կիսագունանք կը
կազուին : Ահաւասիկ հասարակածը
գանակով մը նարնջին վրայ կը գծեմ ,
և եթէ գծած տեղէս այս պտուղն եր-
կու կառը ընեմ , իւրաքանչիւրը՝ կիսա-
գունան մը կը ներկայացնէ :

Դիմեցէք այժմ . ասեղը թիւ մը հա-
կամ ծոսած կը բռնեմ մոմին առջեւ
և միշտ մի և նոյն զրից մէջ պահպա-
նելով՝ մի և նոյն ուղղութեամբ նարին-
ջը կը դարձնեմ . վասն զի երկրիս ա-
ռանցքն այս կերպով գէոյ ՚ի արեւ
հակած է և միշտ մի և նոյն ուղղու-
թիւնն ունի :

Երբ նարինջն աջ կողման բռնեմ ,
հարկէ նկատել , որ ասեղը գէոյ ՚ի մոմ
հակած գիրքավթռնելուն պատճառաւ ,
հիւսիսային բեռենը կը լսւաւողուի ,
հետեւաբար կը տաքնայ . իսկ հարա-
ւայինը՝ ստուերին մէջ կը մնայ . Այս
ժամանակ հիւսիսային կիսագունան հա-
մար անու և հարաւայնոյն համար յը-
մու կ'ըլլայ . այս կը տեսէ յունինս 9էն
մինչեւ սեպտեմբեր 9 , կամ ըստ նոր
տօմարի յունիս 21 էն մինչեւ սեպտեմ-
բեր 21 :

Երբ նարինջը մոմին և իմ մէջ տե-
ղէս անցնեմ ձախ կողման բերելու հա-
մար , հիւսիսային բեռենը կամաց կա-
մաց ստուերին մէջ կը մննէ . իսկ հա-
րաւայինը՝ հետզհետէ կը լսւաւորի .
այս ժամանակ Ալշան կ'ըլլայ և հարաւայ-
նոյն համար՝ Գալրուն , այս կը տեսէ եւ սեպ-
տեմբեր 9 էն մինչեւ դեկտեմբեր 9 ,
կամ ըստ նոր տօմարի սեպտեմբեր 21
էն մինչեւ դեկտեմբեր 21 :

Նարինջը շարունակ դարձնելով երբ
ձախ կողման բերեմ , ի՞նչ կը տեսնէք :
— Հարաւային բեռենն լսւաւորուած
և տարցած . իսկ հիւսիսային՝ ըստ
ստուերին մէջ : Այս ժամանակ հարա-

(1) Տես նոտիքնեաց երկու գլուխները .

Հային կիսուգնամին համար Ա. յառ, և հիւս
օփայեցին համար՝ Զթու կըլլայ. Ա. յա
կը տեւէ գեկտեմբեր ցէն մինչեւ մարտ
9. կամ ըստ նոր տօմարի գեկտեմբեր
21 էն մինչեւ մարտ 21.

Վերջապէս նարնջին մոմին բոլոր
տիքն ըրած շրջանը կը լսացնեմ զայն
վերստին աջ կտղմա բերելսլւ. Նարնջին
աջ կողմա անցնելու միջոցին Բ'նչ կը
տեսնէք. Հիւսիսային բեւեռը կամաց
կամաց կը լսւաւորի. իսկ հարաւա-
յինը հետզհետէ ստուերին մէջ կը
մտնէ. Ա. յա ժամանակ հիւսիսային կի-
սագնտին համար՝ Գարուն և հարաւայ-
նոյն համար Ա. յա կըլլայ. այս կը տեւէ
մարտ 9 էն մինչեւ յունիս 9, կամ
ըստ նոր տօմարի մարտ 21 էն մինչեւ
յունիս 21.

Երբ երկիրը շրջան մը բոլորէ, ա-
ռանց կենալու ուրիշ մը կըսկի և այս
պէս շարունակի. Ահաւասիկ թէ Բ'նչու
համար երեք ամիս գարուն, երեք ա-
միս ամառ, երեք ամիս աշուն և ե-
րեք ամիս ձմեռ կունենանք, որոնք
տարւոյ չըրս Եղանակները կը կոչուին.
Ուրիշն երկիրն արեգակին բոլորախքը
շրջան մ' ընելու համար տասներկու-
ամիս, կամ որ նոյն է տարի մը կ'ան-
ցընէ. Երկրի արեգական բոլորտիքն ը-
րած այս Ճանապարհորդութիւնը լա-
ւալիս շրջուան կը կոչուի. իսկ երկրի
շռնչանի մը նման ինքն իւր վրայ ըրած
շարժումն, ինչպէս արդէն ըսած եմ,
Կողական շրջուան.

ՄԱՅ. — Տունջեան և գիշերոյ պատ-
ճառն երկրի հոլովական շարժումն է :

ՕՐ. ԹԱԴ. — Ա. յա, և չըրս Եղանակաց
պատճառն ալ, ինչպէս արդէն բացատ-
րեցի, երկրի թաւալական շարժումն է :

ՄԱՅ. — Բայց, Օրիորդ, երբ ասեղոյ
մոմին առջեւ հակելով նարնջը շրջ-
չանի մը նման գարձուցիք, բեւեռներէն,
մէկը գիշեր չունեցաւ և միւսը՝ ցորեկ:

ՕՐ. ԹԱԴ. — Ճշմարիտ է, բեւեռ-
ներուն վրայ բոլոր ամառը ցորեկ է,
և բոլոր ձմեռը՝ գիշեր. որչափ բեւե-
ռին մօտ բնակինք, նոյնչափ ամարան
տիւերն երկայն կըլլան և ձմերաննե-
րը կարձ: Որչափ գէպ ՚ի հասարակած
յառաջանանք, նոյնչափ տունջեան տէ
ւողութիւնը գիշերոյ աեւողութեան
հաւասար կըլլայ. իսկ հասարակածին
վրայ միշտ 12 ժամ աիւ և 12 ժամ
գիշեր կըլլայ: Տեսաբ արդէն, որ հա-
սարակածը միշտ լուսաւորուած է և
երկրագնտի ամենատաք մասն է, ուր
միշտ ամսուէ: Լաւ կերպով նկատե-
ցէք մոմին առջեւ նարնջը և տեսէք
թէ լոյն ինչպէս կը սփորի:

ՄԱՅ. — Ի՞նչպէս գիտուած է, որ
երկիրն այս նարնջին պէս կըդառնայ,
միշտ այս ասեղոյն հակման ուղղու-
թեամբ:

ՕՐ. ԹԱԴ. — Եղանակները զայն ինք-
նին կ'ապացուցանեն: Եթէ երկրի ա-
ռանցքը հակած շրջոր, միշտ արե-
գակն երկիրը մէկ բեւեռէն մինչեւ
միւսն՝ ամեն տեղ մի և նոյն կերպով
պիտի լուսաւորէք, հետեւաբար բոլը
երկրին համար մէկ եղանակ մը պիտի
ըլլար և ամեն տեղ տիւ և գիշեր հա-
ւասար երկայնութիւն պիտի ունենա-
յին:

ՄԱՅ. — Հապա Եթէ երկիրն արե-
գական բոլորտիքը չը դառնար:

ՕՐ. ԹԱԴ. — Երկրի առանցքը հա-
կած ըլլարով Եթէ երկրին արեգական
բոլորտիքը չը դառնար, պէտք էր որ
երկրի մէկ կիսադունտը միշտ ամառ
ըլլար եւ միւսը՝ միշտ ձմեռ: Դուք
ինքնին փորձեցէք նարնջը մոմին դի-
մացը բռնելով և ասեղը նարնջին մէջ
տեղին անցնելով և լաւ դիտեցէք թէ
ինչպէս լցար կը սփորի և մտածեցէք:

ԳԼՈՒԽ Զ .
ԱՌՋՄՈՒԹԻՒՆ ՄԱՐՄՆՈՑ

Զիւնէ գնտակ մը . — Հաստատում , նեղուկ և . կազային կամ չովելովն մարմինք . — Մասնիկք . — Ծակուիք . — Եռդիացումն . — Վիճակի փոխիտութիւնք :

ՕՐ . ԹԱԳ . — Բներածդ բնչէ Յակոր :
ՑԱԿ . — Զիւնէ գնտակ մը :

ՕՐ . ԹԱԳ . — Այդ բնչէ գեղեցիկ է .
շատ հաւնեցայ , գրեթէ փղատամէ
գնտակի մը նման կլոր ու կարծր է :

ՑԱԿ . — Անկէ ալ աւելի սպիտակ է :

ՕՐ . ԹԱԳ . — Գիտես թէ բնչ կը
տեսնուի ձիւնին մէջ , երբ մանրացց
յուլ դիտենք :

ՑԱԿ . — Ո՛չ , բնչ կը տեսնուի :

ՕՐ . ԹԱԳ . — Ասողեր :

ՑԱԿ . — Զիւնի մէջ ասողեր :

ՄԱՐ . — Ո՛՛չ , ահա գնտակը գետի
նըն ինկաւ , քիչ մ' ետքը լճակ մը
սպիտի ըլլաց :

ՑԱԿ . — Ի՞նչ չափազանցութիւն .
ուր է լճակը . ահա սպիտակ սիրուն
փոշներ , զօրս ժողվելով՝ պատուհա-
նէն վար սպիտի նետեմ :

ՄԱՐ . — Բայց չես տեսներ շըլա-
զգեստիս և գորգին վրայի ջուրը :

ՑԱԿ . — Բան մը չէ այդ , քիչ մը
կրակին առջեւ կեցիր :

ՄԱՐ . — Հապա մեր տեսնելիք ասո-
ղերը :

ՑԱԿ . — Ո՛՛չ , այս , հապա ասողերը

ՕՐ . ԹԱԳ . — Գորդին վրայի ձիւնի
փոշները դիտեցիք :

ՄԱՐ . — Այս , օրիորդ :

ՕՐ . ԹԱԳ . — Լաւ , ձիւնի գըն-
տիկներուն մէջ այդ ամենափրեթի ըս-
պիտակ հատիկներն այսպիսի կերպով
համախմբուած են , զօրս մանրացց
յուլ դիտած ժամանակնիս ասողանը

ման կ'երեւին . ձիւնի մէջ տեսնուած
այս ասողերուն ձեւերն իրարմէ խօսա-
շատ կը զանազանին :

Մի և նոյն ժամանակ եկած բոլոր
ձիւնի գնաթիկներն ընդհանրութէս մի և
նոյն ձեւն ունին . բայց եթէ ձիւնի
տարափի մը՝ քիչ միջոցէն ու բիշմը յա-
ջորդէ և եթէ օգը փոքր ինչ ցրտա-
նայ կամ մեղմանայ . երկրորդ տարա-
փին մէջ տեսնուած ձեւերն առաջնոյն
ձեւերէն կը զանազանին :

ՄԱՐ . — Սառին մէջ ալ ասողեր կա՞ն :

ՕՐ . ԹԱԳ . — Սառին մէջ ծաղկանը
ման ձեւեր կան , որոնցը առանց ման-
րացցիք տեսնուածներն են լուսամուտ-
ներու ապակիներուն վրայ կազմուած
բիւրեղական ձեւերը :

ՄԱՐ . — Այս առաւօտ սենեակիս ա-
պակիներուն վրայ այդ աեսակ ձեւեր
կային , որոնք վայրի ձարխոսափ կը թը-
մանէին :

ՑԱԿ . — Ինչո՞ւ համար հիմա ըլ կայ :

ՕՐ . ԹԱԳ . — Որովհետեւ սենեակին
մէջ կրակ վառեցիք և ջերմութիւնը
սառն հալեցուց :

ՄԱՐ . — Սառին և ձիւնին մէջ գըն-
ուած այս ամեն ձեւերն ստուգիւ
հետաքրքրական են :

ՕՐ . ԹԱԳ . — Սառն ու ձիւնը բաղ-
կացած են այնչափ փոքրիկ հատիկնե-
րէ , զօրս հազիւ կրնակը երեւակայեր
Այս հատիկները նանդի կը կոչուին . ու-
րոնք իրարու քով գալով ձեւեր կը
կազմեն : Այս մասնիկներն որըսափ ալ
իրարու մօտեցած ըլլան , դարձեալ զե-
րար չէն շշափեր . այլ իրենց մէջու-
ղերը պարապ միջոց մը կը թողուն :
Մասնիկներն այս կերպով իրար միա-
նալով՝ հասպագուն զանգուած մը կը
կազմեն . ինչպէս են սառի կամ ձիւնի
կասր մը :

ՄԱՐ . — Ինչո՞ւ դիտես , որ ձիւնին
մէջ այդպէս փոքրիկ միջոցներ կան :

ՕՐ. ԹԱՂԻ. — Երբ Յակոբը պարտէցին մէջ քիչ մը ձիւն առաւ, այս ձիւնը գրեթէ կակուղ էր, Յակոբ զայն իւր ձեռաց մէջ սկսաւ սեղմէլ, որչափ կը սեղմէր, գնատակն այնչափ կը փոքրունար և կը կարծրանար, ինչո՞ւ համար. — որովհետեւ մասնիկներն իրարու կը մօտենային, և 'ի հարիէ մասնիկներն այս կերպով իրարու մօտենալու համար պէտք է որ իրենց մէջ միջոցներ ունենան. այս փոքրիկ միջոցները ծախփէ կը կոչուին:

ՄԱՅ. — Սառին մէջ ալ ծակտիքներ կան:

ՕՐ. ԹԱՂԻ. — Այս, և այս ծակտիքները խիստ հետաքրքրական արդիւնքներ յառաջաջ կը բերեն, որոց վրայ ուրիշ անդամ մը պիտի խօսիմ:

ՄԱՅ. — Սառի եւ ձիւնի հալման պատճառն ի՞նչ է:

ՕՐ. ԹԱՂԻ. — Զերմութիւնն է, որ մասնիկներուն մէջ մտնելով՝ զանոնք իրարմէ կը հեռացնէ և սառն ու ձիւնը ջուրի կը փխիէ: Զբաց իրարմէ զատուած այս փոքրիկ մասնիկներն աւագի հատիկներու նման իրարու վրայ դիւրաւ կը սահին, ուստի և մասնաւոր ձեւ մը չունին, այլ զերենք պարունակող ամսններուն ձեւը կ'առնեն, օրինակի համար բաժակի մը մէջ լիցուած ջուրը բաժակին ձեւը կ'առնէ. սրուակի մը մէջ լիցուածը՝ սրուակին ձեւը, և այն ջուրը կը հօսի, ուստի և այս պատճառաւ հեղուկ կամ հոսանքար կը կոչուի:

ՅԱԿ. — Երջազգեստիդ վրայի ջուրն ի՞նչ եղու:

ՄԱՅ. — Բարութին անհետացաւ:

ՅԱԿ. — Անհետացաւ, ի՞նչպէս:

ՄԱՅ. — Ստոյգը խօսելով այդ մասին բան մը չը դիսեմ:

ՕՐ. ԹԱՂԻ. — Երբ շրջազգեստ կը

ջոյ մասնիկներն իրարմէ ալ աւելի հեռացուց և զանոնք կազի կամ շոգին ձեւով բոլոր սենեակին մէջ տարածեց: Եւ ահա այս է շրջազգեստիդ վրայէն ջոյ անհետանալուն պատճառը:

ՄԱՅ. — Եսդին գոյն ջունի, որ չեմ տեսներ:

ՕՐ. ԹԱՂԻ. — Կան շոգիներ, որ անգոյն են, ինչպէս է ջուրինը. բայց կանալ, որ գեղին, մանուշակագոյն, կապատ, կանաչ, և այն են. զօրս գիւրաւ կը ունիք տեսնել:

ՅԱԿ. — Բայց երբ ջուրը եռացնենք, միմէ անոր շոգին ալ չը տեսնուիր:

ՕՐ. ԹԱՂԻ. — Արդարեւ ջոյ վրայ տեսակի մը փոքրիկ ամպ կը բարձրանայ, որ ուրիշ բան չէ, բայց եթէ շոգի: Եւ որովհետեւ շոգւոց մասնիկները միշտ իրարմէ հեռանալու կը դիմեն իրենց ունեցած միջոցը գրաւելու համար, ուստի եռացած ջոյն վրայ տեսնուած շոգին, իւր մասնիկները տակաւին իրարմէ շատ հեռացած ջրլալով, այն շափի թանձը կ'երեւի, որչափ եռալու զրութիւնը սասափի ըլլայ. բայց երբ այս շոգին բամբուրի և բոլոր սենեակին մէջ տարածուի, այն առեն միայն ջրոյն վրայ հետզհետէ կազմուած նոր շոգին կը տեսնուի: Եթէ ջուրն երկար ատեն եռացնենք անզգալի կերպով կը պակսի և մինչեւ իսկ կ'անհետի. որովհետեւ ջուրն այս կերպով շոգիանալով բոլոր սենեակին մէջ պիտի ցրուէր: Ահա ջրոյ եռալով այնպէս շոգւոց փոխուիը՝ Եսդիացուն կը կոչուի:

ՄԱՅ. — Բայց եթէ ամանին բերանը խցանով լսաւ մը գոցէի, շոգին պիտի կը հար գուրս ենել:

ՕՐ. ԹԱՂԻ. — Անտարսկայս, վասն զի շոգին այնչափ զօրաւոր է, որ մասնիկներն իրարմէ հեռանալու համար իրցանը բարձրացնելով՝ օդին մէջ պիտի նետէին, կամ այն ամանը պիտի խոր-

տակէին, որոյ մէջ ուղէիք դայն արգիլել:

ՄԱԿ. — Անկարելի՞ է ուրեմն շոգին բանի մը մէջ պահել:

ՕՐ. ԹԱԿ. — Ո՛չ, բայց պէտք է որ շոգին պ օրունակելիք ամսնը խիստ ամուր ըլլայ և այնշափ աւելի ամուր, որշափ պարունակելիք շոգւց քանակութիւնը մեծ ըլլայ:

ՄԱԲ. — Թերեւս ամսնն ամբողջապէս պէտք չէ լեցնել, այնպէս չէ:

ՕՐ. ԹԱԿ. — Երբ ամսնի մը մէջ քիչ մը շոգի գնենիք, ամսնն անմիջապէս կը լեցուի, որովհետեւ շոգւց մասնիկները կը տարածուին եւ իրենց ունեցած բոլոր միջացը կը զրաւեն. բայց կարելի է զանոնիք սեղմել կամ ճնշել ամսնին մէջ հետզհետէ շոցի յառաջ բերելով: Այս կերպով ամսնափոքրիկ ամսն մը, եթէ շատ ամուր ըլլայ, կը քնայ շոգւց մեծ քանակութիւնը մը պարունակել. բայց պէտք է զբուշանալ, որ ամսնը չը պայմի. վասն զի շոգին որշափ սեղմուի կամ որ նոյն է Ճնշուի, այնշափ իրեն ընդդիմացող արգելքը խորտակելու զօրութիւնը կ'աւելնայ: Շոգին խիստ ճնշվան է. որովհետեւ կը նայ շատ սեղմուիլ. նոյնպէս խիստ առաջիկ է, որովհետեւ կը նայ շատ տարածուիլ:

ՄԱԲ. — Օրիորդ, տեսէք, գորդին վրայ ալ ջուր չը մնաց. թէ պէտք դայն նէ կրակին առջեւ բռնեցի և ո՛չ իսկ եռացուցի. ի՞նչ է ուրեմն ասոր անհետացման պատճառը:

ՕՐ. ԹԱԿ. — Այդ ջուրն ալ շոգւց փոխուեցաւ. բայց կրակի առջեւ բռնելին աւելի դանդաղութեամբ:

ՄԱԲ. — Այս սենեակին օդին մէջ չըս շոգի կայ ուրեմն:

ՕՐ. ԹԱԿ. — Անտարակցու:

ՄԱԲ. — Ի՞նչպէս կը նամողել ղիս:

ՕՐ. ԹԱԿ. — Այս գիշեր սենեակիդ կրակը մորած ժամանակ, եթէ օդը ցուրտ ըլլայ, շոգւց մասնիկները լուսամուտի տակակինները շօշափելով պիտի պաղին, իրարու մօնենան և ապա կիմներուն վրայ նրայ կաթիլներ կազմեն, զրու եթէ ուղէիք կը նաք տեսնել. Ցեաց եթէ գիշերը սենեակիդ աւելի պաղի, կարելի է թէ այս կաթիլներն սառին և վաղ առաւօտ լուսամուտիդ ապակիններուն վրայ բիւրեղական տակներ սենենաս: Այս նրայ կաթիլները և բիւրեղական ասեղներն ուրիէ յառաջ կուգան, եթէ ո՛չ սենեակիդ օդին մէջ խառնուած նրայ շոգիէն:

ՄԱԲ. — Բայց ձմեռը, սենեակիս մէջ չուր չը թափած ժամանակս ալ, շատ անդամ սենեակիս ապակիններուն վրայ սառ կը կապէ:

ՕՐ. ԹԱԿ. — Վասն զի օդոյ մէջ տման տառն շատ կամ քիչ չըս շոգի կը գտնաւի:


ՄԱԲ. — Զրոյ այս վիճուկի փոխութիւնները տարօրինակ են. այսպէս վիճակին փոխող ուրիշ բաներ ալ կան:

ՕՐ. ԹԱԿ. — Գրեթէ բոլոր անդործարանաւոր մարմինները կը նան յաջորդաբար հասպարուն, կեղուկ և շգեղուկ կամ իրացին վիճակ ստանալ:

ՄԱԲ. — Անգործարանաւոր մարմիններն որո՞նք են:

ՕՐ. ԹԱԿ. — Վաղը պիտի բացատրեմ ձեզ:

(Կարունակիլէ:)



ՈՒՂԵԿՈՐՈՒԹԻՒՆ

Ի Սուրբ Էջմիածին։ 1876 Յունիս 20.
(Հարուսակութիւն, տես թիւ 5.)

Հին բերդին մէջ կայ եկեղեցի մի և ս
վրոց ձեռքը, ուր է գերեզման Ալբ-
րուհոյն Շուշանկայ դստեր մէծին
Վարդանայ, ուխտատեղի քրիստոնէից,
որ սահմանեալ օրերը միայն բաց է,
ունին այլ շատ եկեղեցիներ և կուսա-
նաց վանքեր, թէ քաղաքին մէջ և թէ
շրջակաները, բնակչաց արանց և կա-
նանց հագուստը խառնէ. ծերունիք հին
վրացի ձեւով, նոյնպէս և կանայք տո-
տնին, իսկ երբ դուրս կ'ելլեն ձերմակ
ստանով կը ծածկուին. իսկ մի մասը
որ հարսւստ և երիտասարդ գերդաս-
տաննիքէ կը բաղկանան, առ հասարակ
արք և կանայք Եւրոպական նորածե-
ւութեանց հետեւած են, եւ կա-
նանց գլուխը միայն վասցւոց ձեւով
մնացած է. Հանքային ջրոց բաղնիք-
ներ, որոց օթեակները երեք կարգի
բաժնուած են. Քաղաքին մի մասը ե-
րեւելի անձմնք օր քանի զօր փառաւոր
շենքերով կը պայծառացնեն, եւ տէ-
րութիւնն ըստ բաւականին հոգ կը
տանի հասարակոց շինութեան, եւ
գետին վերաց տեղ տեղ երկաթեայ
հաստատուն կամուրջներ ձգուած է,
այլ բնակիչը երբեք վոանգէ զերծ
չեն մնացած գետին վեսասներէն, և միշտ
իրենց պէտքը կը հոգան անտի, բարձր
և մասնաւոր տեղերը շոգեշորժ մեքե-
նայով ջուր կը հանուի. Այլ և այլ
քաղաքներէն եւ նոյն իսկ Թուրքաս-
տանէն երեւելի վաճառականք շատ
կը յաճախեն. Գլխաւոր վաճառքն,
մետաքս, բուրդ, բամբակ, գորդ,
շալ, արծաթեղինք եւ ոսկեղինք, ո-
րոնք Պարսկաստանի և Ռուսաստանի
նահանգներէն կը փոխադրուին Եւրո-
պայ, և այլ տեղեր. Տփիսիք վաճա-

ռականք կը յաճախեն նաև տօնախա-
ճառները, որոց մէջ երեւելի է Մա-
կարիայ, տարին մի անգամ։ Մրգեղինը
առատ է որ շրջակայ սահմաններէն կը
փոխադրէն, ունին առատ պարտէղներ
և այգիներ, յորոց կը լինի աղիւ խա-
զող և ընտիր գինի, և ընտրելագոյնն
է Կախեթի գինին, պարտէղները քո-
ղաքէն գուրս կուր գետին եղերը կը
տեսնուին, և գետին վերաց շնուած
փայտաշէն անիւներով կոռուպին։

Ցելս Օգոստոսի մեկնեցանք Տփիսի-
սէն կառքով կէսօրուան միջները,
Ճանապարհը մինչ յԵրեւան խնամով
կառուղի շինուած է, և պէտք եղած
նորոգութիւնը կ'ինի շարունակ. բաց
տեղ տեղ ամրան սաստիկ փոշի և ձրմ-
բան ցեխը անսպակաս է. Ճանապարհին
կարգաւորեալ դոռչի կայաններ շնուած
են սրոնք Ճանապարհորդաց մեծ գիւ-
րութիւններ կը մատակարարեն. թէ
գրաստուց և թէ հանգստանալու մա-
սին։ Երբ երեկոյին առաջին կայանը
հասանք, պշտակի տեսարան մի ներ-
կայացաւ մեզ, զի նախընթաց օրը ա-
ւազակները ճանապարհորդաց վերաց
յարձակելով կողսպտեր և միոյն ձին
սպաններ էին, թէ պէտեւ սատիկանու-
թեան զինուորները հետամուտ էին
գտնալ, նոյն գիշերը կարի գգուշու-
թեամբ ննջեցինք և արշալուացին կա-
նուի մեկնեցանք անտի անվտանգ։
Տփիսիք դաշտերը շատ ընդարձակ են,
և երկրագործութիւնը ըստ հին սովո-
րութեան, եւ կը յուսացնէին զմեղ
արգաւանդահող և բերրի լինել. այս
կողմերը երբեք անտառ չեն տեսնուիր,
Ճանապարհին պատահեցան մեղ բաղ-
մամիւ սովորդք, որք մրգեղին պա-
րեն և այլ ուտեստի վերաբերեալ իրեր
կը փոխադրէին ՚ի Տփիսիք։ Նոյն օրը
հասանք Ալբէն Շուշի-կոչեցիւ գետե-
ղերը ուր կային քանի մի Մալտիանաց

տուներ, գետին վրայ ձգուած քու-
րուկիր կամուրջը չորս կամարներէ կը
բազիանաց, ասաւ երկու ժամ հան-
գիստ տալէն զինի մեկնեցանք, գե-
տեղերբի երկարութեամբ խիս ծառա-
տունկը և պարտէ զներ կ'երեւէն, և
մնացեալ տեղերը ընդարձակ դաշտեր,
և երբեմն փոքրիկ բլատիներ, այս կող-
մերը նախնիք մեր կը կոչէն Գուգա-
րաց աշխարհ որ Հայաստանի մի գա-
ւառն էր. կը տեսնուին Թուրքաց ա-
ւերսկ գիւղերը աստ և անդ ցրիւ,
տուները գետնափոր իրրեւ նկուղ ան-
շուկ և հողաշնչն, և ճանապարհին վե-
րաց նոցա գերեզմանատեղին, մեծա-
մեծ կոմողներ կանգնած . երեկոյեան
հասանիք կոյան մի և ըստ սովորու-
թեան գիշերը անցուց չինք, և առաւօ-
տուն մեկնեցանք երկաթաշէն կամուր-
ջէ մի անցնելով. աստ զիմուռքեցին
զմեզ գեղեցիկ առուներ և ջրեր, ո-
րմնիք խօսնալով այսր անդր կընթա-
հան մշակուած արտերը և պարտէ զ-
ները սուռդելու, մացառուտ և ան-
տառուտ տեղիք, և հայագդի գիւղա-
կանիք երեւիլ: Երեկոյեան հասանիք
չէ կը առաց կոչեցեալ գիւղը, ճանա-
պարհին վերայ շնուռած է պանդոկն և
կրպականին, գետակը ձորակին մէջէն
կ'անցնի, համանուն գիւղը գետոյն ա-
րեւելեան կողմը լեռան ստորոտը տա-
փարակ տեղը շնուռած է, բնակիչքը
ամբողջ հայագդի, գիւղին շրջապատը
այդի և պարտէզ, անուանի է կարմր-
րուկը, (այն է Գովաճք): Խոկ լեռները
ամբողջ անտառով ծածկուած մինչեւ
Գեղամայ ծովը, կը գարմանեն ոչխար
և այլ լնուանի կենդանիներ, անտառ-
ները ուր ուրեք և իցէ ամբողջապէս
Ռուսաց տէրութեան սեփհականու-
թիւնն համարուած է, և ըստ պատ-
շաճին ամեն տեղ հսկու պահապան-
ներ դրուած են, ովետք եղած առաջ-

ձը և առանձին ՚ի կիր առնելոյ փայտը՝
ինքը կը մասակարարէ, և վաճառաւած
գերաններուն վերաց սահմանեալ կնիքը
կը զրոշմուի, այս օրէնքէն դուրս ոչ
ոք կարող է անտառէն գտնէ Ճիւղ մի
կորել, և յանդգնաղաց պատիմ սահ-
մանուած է: Առաւօտուն կանուխ
մեկնեցանք աստի միշտ գէպ ՚ի զար ՚ի
վեր ելլորվ, բավանդակ լեռները խիս
անտառներով մշտադալոր, հովիսնե-
րէն կընթանան առատ ջներ և գե-
տակներ, օդը բարեխառն առողջ և
կենդանի ջուրը զովարար, այս անտառ-
ներուն մէջ կը գտնուին նաև մրգա-
բեր ծառեր, բայց անպատուաստ և
վայրի, ինչպէս տանձ խնձոր սարոր և
այլն: Կ'ս օրին հասանիք Տիվճան կո-
չեցեալ գիւղը, լեռնակներու վերաց
շնուռած, գիւղին ստորոտը հիւսիսո-
յին կողմն ձորակին մէջէն կ'անցնի
գետակը, բայց լեռներուն ստորոտէն
բարեհամարքերն կը բլինին, ջուրը
խիստ պազ, բնակիչքը հայագդի և ւ
գաղթական Մալականներ, Հոյք մէծ
մասամբ Տերութեան պաշտօններ կը
վարեն, տունք բնակութիւնք տակաւ
կը բարեկարգին, ընդ որս և կառա-
վորչին օթարանը, և մալականաց բը-
ռակարանները ըստ օրինի կարգաւ և
օրինաւոր և տախտակամած, կան այն-
պիսի տուններ՝ որը Վին դրութեամբ
գեանափոր ցած և անշուք, որք ըստ
մէծի մասին Հայոց կը վերաբերին, իսկ
կառավարութեան կողմէն կը շնունին
ուղղագիծ կարգաւ ոյզ և այլ պիտա-
նի և կարեւոր չենքեր: Երանի կիսներ,
որ մեր Հայագդի եղացրներէն ոմանիք
ալ գոնէ նոցա օրինակին հետեւին:
խափաննեն իրենց այդ գետնափոր գէճ
և խմնաւ հոգետանջ բնակարանները,
աշխատին իրենց տունները օրինաւոր
կարգաւ յարգաբել, իրենց և լնասա-
նեաց կեանքը ապահավել:

ՊԱՐՈՒՆՈԿՈՒԹԻՒՆ

Կարեւորութիւն ուսման Ա. Գրոց . (Նոր. և վել.) .	121-124
Աստղագիտական . - Արուսեակ	125-129
Մոլոչ ՚ի վերայ ջուրցն Նիլեայ	129-132
Մարդկացին կեանք . (Նորունավել)	132-136
Բնագիտութեան և Տիեզերագրութեան վրայ պարզ խօսակցութիւն . (Նորունավել)	136-142
Ուղեւորութիւն ՚ի Ա. Էջմիածին . (Նորունավել)	143-144

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԻ

- Ա. Սիօնը ամնէ ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մէկուկես
ուժածալ թղթով :
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէջիտիւ , ճանապարհի ծախքով
միաուին , կանխիկ վճարելի :
- Գ. Չառ տետրակ տռնել աւզող պէտք է ամեն մէկ տետրին շորս դա-
հեկան վճարէ :